

ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Ո՛Չ Կառավարիչ Կեվըն Նիւսըմի Պաշտօնանկութեան

Սեպտեմբեր 14-ին պիտի կայանայ Քալիֆորնիոյ Կառավարիչ Կեվըն Նիւսըմի պաշտօնանկութեան հանրաքուէն, որու նախաձեռնողներն են Հանրապետական կուսակցութեան շրջանակները, որոնք յաջողած էին 1.5 միլիոն ստորագրութիւն հաւաքելով պաշտօնանկութեան հարցը դնել հանրաքուէի:

Այս հարցը գլխաւորաբար ծագեցաւ անցեալ տարի՝ համավարակի ամենէն թեժ օրերուն, երբ կառավարիչի որոշումով արգիլուած էին ամէն տեսակի հաւաքոյթները ու փակ էին ճաշարանները: Այդ օրերուն, մամուլին մէջ տարածուեցաւ լուսանկար մը, ուր կ'երեւեր Նիւսըմ, 10-12 այլ անձերու հետ՝ ֆրանսական սուղնոց ճաշարանի մը մը մէջ, ուր կը նշուէր կառավարիչի մեծահարուստ բարեկամներէն եւ ընտրապայքարներու նուիրատուներէն մէկուն տարեդարձը:


Լուսանկարի հրապարակումէն անմիջապէս յետոյ Նիւսըմ ընդունելով իր սխալը, ներողութիւն խնդրեց Նահանգի ժողովուրդէն, սակայն Կառավարիչի հակառակորդները առիթը յարմար գտան պաշտօնանկութեան գործընթաց սկսելու՝ Կառավարիչը մեղադրելով նաեւ համավարակի դէմ պայքարի գծով անոր կողմէ առնուած խիստ քայլերուն, դիմակ օգտագործելու պարտադրանքին եւ այլ սահմանափակումներուն համար:

Պաշտօնանկութեան այս հանրաքուէն խոցելի է բազմաթիւ առումներով: Առաջինը, Կեվըն Նիւսըմի պաշտօնավարման ակարտի մնացած է մէկ տարի եւ մի քանի ամիս ու 2022-ի Նոյեմբերին տեղի պիտի ունենան նոր ընտրութիւններ: Երկրորդ, իմաստ չունէր Նահանգի պիւտճէն 275 միլիոն տոլար ծախսել՝ հանրաքուէն կազմակերպելու համար, երբ այդ գումարը կրնար օգտագործուիլ այլ նպատակներու, օրինակ համավարակի պատճառաւ անգործութեան մատնուածներուն:

Երրորդ պատճառը այն է թէ, պաշտօնանկութեան հանրաքուէի օրէնքը ինքնին դերի է, այն իմաստով որ, ընտրողներու 49.9 տոկոսը կրնայ «Ո՛չ» քուէարկել պաշտօնանկութեան, սակայն չստանալով 50 տոկոս առաւել մէկ ծայն, Նիւսըմ կրնայ հեռացուիլ իր պաշտօնէն ու իր տեղը գայ 20-25 տոկոս ստացող թեկնածու մը: Հարցախոյզերու համաձայն, այս սինարիոն կրնայ իրականութիւն

Շար.ը էջ 6

Փաշինեան Եւ Ռուսաստանի Հանրապետութեան Ընդգծած Եւ Մինսքի Խուճարի Գործունէութեան Կարելութիւնը



Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան եւ ԵԱՀԿ Մինսքի Խուճարի Ռուսաստանի նորանշանակ համանախագահ՝ Իկոր Խովաչեւ

ՀՀ վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան ընդունած է ճանաչողական այցով Երեւան գտնուող ԵԱՀԿ Մինսքի Խուճարի Ռուսաստանի նորանշանակ համանախագահ՝ Իկոր Խովաչեւը:


Կառավարութեան լրատուականի հաղորդմամբ անոնք քննարկ

կած են Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ուղիները՝ ընդգծելով Մինսքի Խուճարի համանախագահութեան գործունէութեան կարեւորութիւնը:

Խովաչեւը աւելի վաղ ընդունած

Շար.ը էջ 6

Հայաստանցիներու 63 Տոկոսը Գոհ է ԱԺ-ի Ընտրութիւններու Արդիւնքներէն



Շար.ը էջ 6

Հայաստանցիներու 63 տոկոսը գոհ է Յունիսի 20-ի խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներէն, 29 տոկոսը՝ դժգոհ, իսկ 8 տոկոսն ալ դժուարած է պատասխանելու: Սա Միջազգային հանրապետական հիմնարկի՝ յետընտրական շրջանին՝ Յուլիսին տեղի ունեցած հարցման տուեալներն են:

Անվտանգութեան հարցերու լուծումը նոր կառավարութեան առաջնահերթութիւններէն է հարցուողներու 56 տոկոսը, խորհրդարանին համար ռազմական ոլորտը առաջնահերթ համարած է քաղաքացիներու 11 տոկոսը: Հայաստանցիները կարեւորած են նաեւ ընկերային հարցերու բարելաւումը, բանակի հզօրացումը, տնտես

ական զարգացումն ու գերիներու վերադարձը: Քաղաքական հասարակութեան ներկայացուցիչները բնական կը համարեն, որ յետպատերազմական իրավիճակին հասարակութեան մէջ առաջնային դարձած են անվտանգութեան ու բանակին առնչուող հարցերը:

Հարցուող հայաստանցիներու գրեթէ կէսը, ըստ Միջազգային հանրապետական հիմնարկին, կը հաւատայ, որ ապագան աւելի լաւ պիտի ըլլայ, կամ յոյս ունի, որ որոշ չափով աւելի լաւ պիտի ըլլայ, իսկ 29 տոկոսն ալ անապահովութեան զգացում եւ անհանգստութիւն ունի ապագայի նկատմամբ, իսկ 17 տոկոսն ալ լիակատար հիասթափուած է կամ հաւատք չունի ապագայի նկատմամբ:

Ռուս Խաղաղապահները Տեղակայուած Եւ Ժամանակաւոր Կ'ըսէ Ալիեւի Խորհրդակցանը

Ղարաբաղը Ատրպէյճանի տարածք է, իսկ ռուս խաղաղապահները այնտեղ տեղակայուած են ժամանակաւոր, BBC-ի ատրպէյճանական ծառայութեան ըսած է Ատրպէյճանի նախագահի խորհրդական՝ Հիքմէթ Հաճիբեւը:

«Ողջ Ղարաբաղը Ատրպէյճանի ինքնիշխան տարածք է, միջազգային հանրութիւնը կը ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը եւ ինքնիշխանութիւնը», - ըսած է ան, աւելցնելով, որ ռուս խաղաղապահները տեղակայուած են Ատրպէյճանի մաս կազմող Ղարաբաղի շրջանի որոշակի հատուածներ՝ Նոյեմբեր 10-ի յայտարարութեան համապատասխան:

Նախագահ Ալիեւի խորհրդականը նշած է, որ եռակողմ այդ յայտարարութիւնը սահմանած է խաղաղապահ ուժերու տեղակայման քաղաքական եւ որոշ չափով՝ իրաւական շրջանակները:

«Ինչ կը վերաբերի ռուս խաղաղապահներու մանտաթի շուրջ

Իրադարձութիւնները Ցոյց Տուին, Որ Ժողովրդավարութիւնը Հայաստանի Մէջ Անշրջելի Է. Լաքոթ

«Հայաստանի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւնները ցոյց տուին, որ ժողովրդավարութիւնը երկիրին մէջ այլեւս անշրջելի է, ու հայ ժողովուրդը կրնայ անով հպարտ ըլլալ», վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ հանդիպման ընթացքին ըսած է Ֆրանսայի դեսպանի Ժոնաթան Լաքոթ:

Լաքոթը, որ կ'աւարտէ իր դիւանագիտական առաքելութիւնը ՀՀ-ի մօտ, նշած է, որ Ֆրանսան պիտի շարունակէ սերտ համագործակցութիւնը Հայաստանի հետ տարբեր ոլորտներու մէջ, անոնց կարգին՝ բարեփոխումները առաջ մղելու նպատակով, հաղորդած են կառավարութեան:

Հայաստանի ղեկավարը իր հերթին խօսած է երկու երկիրներու բարեկամութեան եւ համագործակցութեան ընդլայնման մասին: Ինչպէս նաեւ ընդգծած է Ֆրանսայի կարեւոր դերը որպէս ԵԱՀԿ Մինսքի համանախագահ պետութիւն:

Անն Լոյոն պիտի փոխարինէ Ժոնաթան Լաքոթը:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ատրպեյճանում Կան Սինչեւ Նոյեմբերի 9-ի Յայտարարութիւնը Գերեվարուած Զայ Ռազմագերիներ. Լաւրովը Սխալ Է

ԼՈՒՍԻՆԷ ՈՍԿԱՆԵԱՆ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լաւրովը Օգոստոսի 31-ին Մոսկուայում հայաստանցի գործընկերոջ՝ Արարատ Միրզոյեանի հետ հանդիպման ժամանակ յայտարարել է, որ Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութիւնում խօսուած էր այն ռազմագերիներին ազատման մասին, որոնք այդ պահի դրութեամբ էին գտնուած գերութեան մէջ:

Մասնաւորապէս, լրագրողի դիտարկմանը, որ Ատրպեյճանը չի կատարուած 2020 թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան ծրուէ կէտը, Լաւրովը նշել է. Ներկայումս ատրպեյճանցիները պահուած են հայ զինծառայողների այն խմբի մեծ մասին, որը գերեվարուել է Նոյեմբերի վերջին՝ յայտարարութեան ուժի մէջ մտնելուց յետոյ:

Փաստերի ստուգման հարթակը փորձել է պարզել, թէ արդեօք Սերգեյ Լաւրովի պնդումը համապատասխանում է իրականութեանը:

Յիշեցնենք, որ 2020 թուականի Սեպտեմբերի 27-ին Ատրպեյճանը լայնածաւալ ռազմական գործողութիւն սկսեց ընդդէմ Արցախի: 44 օր տեւած պատերազմից յետոյ Նոյեմբերի 9-ին վարչապետ Նիկոլ Փաշինեանը, Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը յայտարարութիւն տարածեցին, որով ռազմական գործողութիւնները դադարեցուած էին:

Յայտարարութիւն 8-րդ կէտում նշուած էր, որ պէտք է տեղի ունենայ ռազմագերիներին, պատանդներին եւ պահուած զինամթերքը մահացածների մարմիններին փոխանակում:

Դեկտեմբերի 14-ին հայրենիք

վերադարձաւ հայ գերիների ամենամեծ՝ 44 անձից բաղկացած խումբը:

Դեկտեմբերի 16-ին յայտնեցին, որ օրեր առաջ Հաղործի շրջանի Խծաբերդ եւ Հին Թաղերի գիւղերի հատուածում գերեվարուել են աւելի քան 60 հայ զինծառայողներ:

Fir.am-ը կապ հաստատեց Արցախի Մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակի հետ՝ պարզելու, թէ արդեօք Պաքուում մինչեւ այժմ պահուող գերիների թոււմ կան անձինք, որոնք գերեվարուել են մինչեւ Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնը: Գրասենեակից յայտնեցին, որ Պաքուում պահուած են առնուազն երկու անձինք՝ Ալիոշա Խոսրովեանը եւ Լիւզիլի Մկրտչեանը, որոնք երկուսն էլ գերեվարուել են պատերազմի օրերին՝ մինչեւ յայտարարութեան ուժի մէջ մտնելը:

Լիւզիլի Մկրտչեանը գերեվարուել է 2020 թուականի Հոկտեմբերի 20-ին, իսկ Ալիոշա Խոսրովեանը՝ Հոկտեմբերի 3-ին:

Պաքուում նրանց դէմ սկսուել էր դատական գործընթաց, որով նրանք մեղադրուել էին 90-ականների պատերազմի ժամանակ ատրպեյճանցի գերիների խոշտանգելու մէջ: Մկրտչեանը եւ Խոսրովեանը դատաւարուել են 20 տարուայ ազատազրկման:

Եւրադատարանում ռազմագերիների իրաւունքների պաշտպանութեամբ զբաղուող փաստաբան Սիրանոյշ Սահակեանը Fir.am-ի հետ զրոյցում նշեց, որ Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնից առաջ գերեվարուել եւ մինչեւ այժմ բռնի կերպով այնտեղ է պահուում 5 անձ. Նոյեմբերի 9-10 սահմանային օր կայ. մի մասը լուսադէմին են գերեվարուել: Փաստացի ամբողջ

ծաւալով գործողութիւնները դադարեցուած չեն եղել: 3 հոգին սահմանային օրուայ ընթացքում են գերի վերցուել: Վիճելիութիւն կայ այդ հարցում. ուժի մէջ մտնել էր զինադադարը, թէ՛ ոչ:

Նշենք, որ անմիջապէս զինադադարի հաստատումից յետոյ Շուշիում գերեվարուեցին լիբանանահայ Մարալ Նաճարեանը եւ Վիգէն Էուլջեքեանը:

Նոյն օրը Բերձորից Ստեփանակերտ ճանապարհին գերեվարուել էին նաեւ Նոր Հայաստան Հայրենիք-Սփիւռք բարեգործական ՀԿ-ի հիմնադիր նախագահ Գէորգ Սուջեանն ու նրա ընկերը՝ Դաւիթ Դաւթեանը:

Ամիսներ անց՝ Մարտի 11-ին Մարալ Նաճարեանը ազատուել է գերութիւնից:

Վիգէն Էուլջեքեանի, Գէորգ Սուջեանի եւ Դաւիթ Դաւթեանի դէմ դատավարութիւններ են ընթացել Ատրպեյճանում: Լիբանանահայ Վիգէն Էուլջեքեանը մեղադրուել է վարձկանութեան ու ահաբեկչութեան մէջ եւ դատաւարուել է 20 տարուայ ազատազրկման: Լրտեսութեան մէջ մեղադրուող Գէորգ Սուջեանը եւ Դաւիթ Դաւթեանը դատաւարուել են 16 տարուայ ազատազրկման:

Սիրանուշ Սահակեանը նշեց նաեւ, որ ներկայումս պաշտօնապէս հաստատուած 45 գերի կայ Ատրպեյճանում: Այս անձինք անցել են դատավարութիւն եւ նրանց առնչութեամբ, ըստ փաստաբանի, կան ապօրինի դատավճիռներ, որոնցով նրանք ազատազրկման են ենթարկուել:

Սակայն գերիներին իրական թիւը դեռեւս յստակ չէ. Մենք տուեալներ ունենք, որ պաշտօնապէս չհաստատուած այլ գերիներ

եւս ապօրինի պահուում են, ուղղակի թուերը թաքցուած են:

Յատկանշական է նաեւ, որ Խծաբերդում եւ Հին Թաղերում մի քանի տասնեակ հայ զինծառայողների գերեվարումը նոյնպէս հակասում էր Նոյեմբերի 9-ի յայտարարութեանը, քանի որ, ըստ փաստաթղթի առաջին կէտի, կողմերը կանգ էին առնում իրենց զբաղեցրած դիրքերում: Ատրպեյճանը ռազմական գործողութիւնների ընթացքում չէր կարողացել գրաւել այդ երկու գիւղերը: Դրանք շարունակուել էին մնալ հայկական ուժերի վերահսկողութեան տակ, իսկ ռուս խաղաղապահները պէտք է ժամանէին այնտեղ: Սակայն փաստացի ատրպեյճանական բանակը խախտել էր համաձայնութիւնը զինադադարից յետոյ եւ Դեկտեմբերի 12-ին ռազմական գործողութիւններ էր իրականացրել, որի հետեւանքով սպանուել եւ գերեվարուել էին հայ զինծառայողներ: Ի դէպ, այդ հատուածում գերեվարուածներից մի քանիսը վերադարձել են հայրենիք:

Այսպիսով, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լաւրովի պնդումը, թէ Ատրպեյճանում այժմ պահուում են միայն Նոյեմբերի 9-ից յետոյ գերեվարուած անձինք սխալ է: Կայ առնուազն 2 գերի, որոնք գերեվարուել են Հոկտեմբերին: Բացի այդ, կայ եւս 3 անձ, որոնք գերեվարուել են Նոյեմբերի 9-ի լույսի 10-ի գիշերը, երբ դեռ պարզ չէր, թէ յայտարարութիւնը ուժի մէջ մտել է, թէ՛ ոչ: Fir.am

Ալիեւի Քաղաքական Կոտորակներն Ու Արցախի Կարգավիճակի Զեռանկարը

ՅԱՅԿ ԻՍՐԱԵԼԵԱՆ

Լեռնային Ղարաբաղն Ատրպեյճան է եւ ռուս խաղաղապահներն այնտեղ ժամանակաւոր են, յայտարարել է Ատրպեյճանի նախագահ Ալիեւի աշխատակազմի արտաքին կապերի պատասխանատու Հիքմետ Հաջիբեկը: Պաքուի համար այդ մասին խօսելու առիթ է տուել Ռուսաստանի պետական կառավարման միասնական տեղեկատուական համակարգում ՊՆ գնումների առումով տեղ գտած ձեւակերպումը՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւն:

Սակայն, հիմք կայ ենթադրելու, որ միայն ձեւակերպման խնդիրը չէ, որ Ատրպեյճանին ստիպել է խօսել ռուս խաղաղապահների ժամանակաւորութեան մասին: Այն էլ խօսել Հաջիբեկի մակարդակով, ինչը ուղղակի նշանակում է Ալիեւ: Այլ կերպ ասած, եթէ խօսում է Հաջիբեկը, ուրեմն անմիջապէս անհանգստանում է Ալիեւը: Եւ, եթէ Պաքուն հարկ է համարել անդրադառնալ խնդրին այդ մակարդակով, ապա կը նշանակի, որ Ռուսաստանի տեղեկատուական կառավարական հարթակում տեղ գտած ձեւակերպումը դիտարկում է հենց ամենաբարձր մակարդակով թոյլ տրուած ակտ:

Իրաւացի է Պաքուն, թէ ոչ,

սա հարցի մի կողմն է: Տուեալ պարագայում յատկանշական է այն, որ Պաքուի արձագանքը չափազանց զգալուն եւ սուր է: Սա էլ իր հերթին կը նշանակի, որ խնդիրը ինքնին մտահոգում է վաղուց, մտահոգիչ է աւելի խորքային առումով, քան միայն տեղեկատուական այն առիթի, որի վերաբերեալ ծագել է նոյնիսկ ռուս-ատրպեյճանական փոքր սկանդալ եւ Պաքուի ԱԳՆ բողոքի նոտա է յղել Մոսկուային:

Ամէն օրուայ հետ Ալիեւը թերեւս զգում է կամ նոյնիսկ տեսնում, որ Արցախը գնում է ձեռքից: Իհարկէ, դեռ պարզ չէ, թէ ուր: Այսինքն, գնում է դէպի Ռուսաստան, թէ՞ օրինակ դէպի միջազգային որեւէ մանդատի ներքոյ, որը կ'ենթադրի այլ իրաւական-կարգավիճակային ռեժիմ, որեւէ միջազգային կառույցի պրոտեկտորատի ներքոյ: Ինչ խօսք, այս հեռանկարներից մտահոգութեան իր բաժինը կարող է ունենալ նաեւ Երեւանը, սակայն այդ մտահոգութիւնը մեր դէպքում կրելու է մարտավարական բնոյթ, իսկ ահա Պաքուի պարագայում՝ այն ռազմավարական խորքային է: Ալիեւն ըստ ամենայնի Նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագիրը ստորագրել է կրեմլի հետ պայմանաւորութեամբ, որ Ռուսաստան

նր զնալու է հակամարտութեան կոնսերվացման այն ճանապարհով, որի մասին բազմաթիւ յայտարարութիւններով ակնարկել է նաեւ Ալիեւը:

Ասել կուզի, ճանապարհով, որը Ալիեւին թոյլ կը տայ պարբերաբար յայտարարել հակամարտութիւնը լուծուած լինելու մասին, կամ հաւաստի կը դարձնի նրա այդ յայտարարութիւնները: Մինչդեռ, մի կողմից խօսելով կեանքը նորմալացնելու, հարորդուհիները ապաշարջափակելու, հետկոնֆլիկտային համակեցութիւն հաստատելու ձգտումների մասին, Ռուսաստանը միւս կողմից քաղաքական համատեքստում գործում է բոլորովին այլ տրամաբանութեամբ: Պաքուն թերեւս հենց դրավկայութիւն է դիտարկում Հայաստանից հնչող յայտարարութիւնները, որ Պաքուի հետ խաղաղ բանակցութիւն կարող է լինել միայն այն դէպքում, երբ Պաքուն կը քննարկի նաեւ Արցախի կարգավիճակի հարց:

Ընդ որում, յատկանշական է երեւի թէ այն, որ Միրզոյեան-Լաւրով հանդիպումից յետոյ համատեղ ասուլիսում Հայաստանի արտգործնախարարի այդ յայտարարութիւնից յետոյ է ռուսական

Շար.ը էջ 6



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեան Զայց Ներկայացած է Խաչատուր Սուքիասեանի Դէմ



Խաչատուր Սուքիասեան



Սերժ Սարգսեան

Սերժ Սարգսեան Զայց ներկայացուցած է ընդդէմ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր՝ Խաչատուր Սուքիասեանին: Երրորդ նախագահը իշխանական պատգամաւորէն կը պահանջէ հերքել «իր պատիւն ու բարի համբաւը արատաւորող տեղեկութիւնները»:

Սուքիասեան գրեթէ տասը օր առաջ Ազգային ժողովի ամպիոնէն յայտարարած էր, թէ Սարգսեան մեծ գումարներ կորսնցուցած է խաղատուներու մէջ: Պաշտօնաթող նախագահի փաստաբան՝ Ամրամ Մակինեան պնդած է, որ իշխող ուժի պատգամաւորը իր յայտարարութիւնը հաստատող որեւէ փաստ չի կրնար ներկայացնել:

«Մենք ճամբուած ենք, որ դատարանը մեր հայցը բաւարարելու է, որովհետեւ չեն կարող լինել այնպիսի փաստեր, որոնք կ'ապացուցեն Խաչատուր Սուքիասեանի հնչեցրած արտայայտութիւնը, չեն կարող, որովհետեւ այդպիսի իրողութիւն գոյութիւն ունենալ մեր առարկայական իրականութեան մէջ չի կարող», - նշած է Մակինեան:

Խաչատուր Սուքիասեանը,

մասնաւորապէս, մեղադրած էր Սարգսեանը խաղատուներուն մէջ 100 միլիոն տոլարէն աւելի գումար կորսնցնելու համար: Յաջորդ օրն ալ լրագրողներուն հետ ձեպագրուցի ժամանակ վերահաստատած էր ըսածը եւ պնդած, թէ իր խօսքերը հիմնաւոր են: Սուքիասեան ըսած էր, որ ինքը դեռ աւելի քիչ գումար նշած է, որպէսզի աւելի ապացուցելի ըլլայ իր ըսածը, սակայն ապացուցներ չէր հրապարակած. «Մեր պետական օդանաւը եկել է համապատասխան տեղից, որտեղ քաղինօ կայ, հստեղից գումարները տոպրակներով տարել են, որ վճարեն», - օրեր առաջ ըսած էր պատգամաւորը:

Սերժ Սարգսեանի փաստաբանը հայցով պահանջած է դատարանէն նաեւ 1 միլիոն դրամ բռնագանձել իշխանական պատգամաւորէն: Այս գումարը, ըստ Ամրամ Մակինեանին, երրորդ նախագահը պիտի ուղղէ Զինծառայողներու ապահովագրութեան հիմնադրամին: Փաստաբանը յիշեցուցած է, որ Սերժ Սարգսեանը դեռ նախընտրական քարոզչութեան ընթացքին հերքած է իր անուան հետ առնչուող տեղեկութիւնները:

**«Պատերազմը Պարտուեցանք Նոյն Վիտալի Բալասանեաններու Շնորհիւ».
Լեւոն Շիրինեան**

ՀՀ Աժ պատուիրակութիւնը՝ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր, Աժ փոխնախագահ Ռուբէն Ռուբինեանի գլխավորութեամբ, մեկնած է Արցախ՝ Արցախի անկախութեան հռչակման 30-ամեակին նուիրուած համատեղ յատուկ նիստին մասնակցելու եւ Սեպտեմբեր 2-ին Արցախի Հանրապետութեան հռչակման օրուայ կապակցութեամբ:

Ուշագրաւ էր, որ Արցախի ԱՆ քարտուղար Վիտալի Բալասանեանին սատարած «Արդարութիւն» խմբակցութիւնը յայտարարութեամբ հրաժարած է մասնակցիլ համատեղ յատուկ նիստին:

Քաղաքագէտ՝ Լեւոն Շիրինեան Վիտալի Բալասանեանի դեկավարած խմբակցութեան որոշումը գարմանալի չէ համարած. «Բոլորս էլ գիտենք՝ Վիտալի Բալասանեանն ով է ու ինչ է անում: Նա անում է այն, ինչը չի էլ թաքցնում: Որեւէ արտառոց բան չեմ տեսնում, մեր պատուիրակութիւնը զնայել է ու մասնակցել այդ նիստին: Բայց ես էլ աւելի կարեւոր եմ համարում



Քաղաքագէտ՝ Լեւոն Շիրինեան

մեր արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնները Մոսկուայում եւ վարչապետի յղած շնորհաւորական ուղերձն առ այն, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը սրբազան է: Դրանից աւելի ի՞նչ պէտք է լինի: Հաշուի առէք, որ պատերազմը պարտուել էք նոյն Վիտալի Բալասանեանների շնորհիւ, ի՞նչն է տարօրինակ», - «Առա-

ՅԲԾ-ն Ձերբակալած է Նախկին Գլխաւոր Դատախազ՝ Աղուան Յովսէփեանին

Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅԲԾ) ձերբակալած է Հայաստանի նախկին գլխաւոր դատախազ, Քննչական կոմիտէի նախկին նախագահ՝ Աղուան Յովսէփեանը: Նախկին բարձրաստիճան պաշտօնեային մեղադրանք առաջադրուած է փողերու լուսցման, կաշառք ստանալու եւ խարդախութեամբ գոյք յափշտակելու համար:

Ըստ իրաւապահներուն, 68-ամեայ Յովսէփեանը, որ 2004-էն մինչեւ 2018 թուականներու ընթացքին գրաւած է նախ գլխաւոր դատախազի, ապա Քննչական կոմիտէի նախագահի պաշտօնները, օրինականացուցած է աւելի քան 1 միլիարդ 300 միլիոն դրամ, մասնակցած է ձեռնարկատիրական գործունէութիւն կատարող շարք մը ընկերութիւններու կառավարման, ստացած է առանձնապէս խոշոր չափերով՝ 190 միլիոն դրամ կաշառք եւ խարդախութեամբ յափշտակած է 800 միլիոն դրամ գոյք:

«Ազատութիւն»-ի հետ զրոյցին գործը քննող Յատուկ քննչական ծառայութեան խօսնակ՝ Մարինա Օհանջանեան ըսաւ, թէ առաւել մանրամասն տեղեկատուութիւն կը հաղորդեն աւելի ուշ. «Այս պահին այլ մանրամասներ չենք կարող յայտնել՝ քրէական գործի շահերից ելնելով»:

Նախկին գլխաւոր դատախազի



Նախկին գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեան

պաշտպան՝ Գագիկ Խաչիկեանը դեռ մեկնաբանութիւն չէ կատարած: Ան ըսած է թէ առաջիկային հանդէս կու գայ յայտարարութեամբ:

Աղուան Յովսէփեան 9 տարի դեկավարած էր Գլխաւոր դատախազութիւնը, յետոյ ալ մինչեւ 2018-ի յեղափոխութիւնը՝ չորս տարի դեկավարած էր Քննչական կոմիտէին: 2018-ին՝ Սերժ Սարգսեանի հրաժարականի յաջորդ օրը, Յովսէփեան «Ազատութիւն»-ի հետ զրոյցի ընթացքին ըսած էր, թէ պիտի աշխատի նոր իշխանութեան հետ, բայց երկու ամիս ետք ան հրաժարական ներկայացուցած էր:

Ընդդիմադիր Պատգամաւորը Ծեծի Ենթարկելու Զարցով Յարուցուած է Քրեական Գործ

Աժ-ի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր՝ Դաշնակցական Գեղամ Մանուկեանը ծեծի ենթարկելու դրուագով յարուցուած է քրէական գործ ՔՕ 118-րդ յօդուածով (ծեծելը կամ այլ բռնի գործողութիւններ կատարելը), «Ազատութիւն»-ին յայտնած են Յատուկ քննչական ծառայութեան:

Տուեալ յանցանքը կը նախատեսէ տուգանք՝ նուազագոյն աշխատավարձի առաւելագոյնը հարիւրապատիկի չափով, կամ կալանքով՝ առաւելագոյնը երկու ամիս ժամկէտով:

Խորհրդարանէն ներս տեղի ունեցած մնացած դէպքերուն վերաբերել նախապատրաստուած նիւթերու հիման վրայ որոշում կայացուած է քրէական գործ յարուցելը մերժելու մասին:

Յիշեցնենք, որ խորհրդարանէն ներս կառավարութեան ծրագրի քննարկումը բռնու անցած էր,



«Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գեղամ Մանուկեան

ուղեկցուած ծեծկոտուքով, սեռական բնույթի հայհոյանքներով, ընդդիմութեան ու իշխանութեան ներկայացուցիչներու փոխադարձ վիրաւորանքներով, քաշքշուկով եւ իրարու վրայ շիշ նետելով:

2020-ի Տարեվերջի Զամեմատ ԶՅ Արտաքին Պարտքը Աճած է 10.2%-ով

«Հայաստանի արտաքին պետական պարտքը այս տարուայ Յունիսի 30-ի դրութեամբ կազմել է 6 միլիարդ 677.672 միլիոն տոլար եւ 2020 թուականի Դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 10.2 տոկոսով»: Այս մասին տեղեկացուցած է ՀՀ վիճակագրական կոմիտէն: Նախորդ տարեվերջին արտաքին պետական պարտքը կազմած էր 6

միլիարդ 059,444 միլիոն տոլար: Արտաքին պարտքէն ՀՀ կառավարութեան պարտքը կը կազմէ 6 միլիարդ 209,581 միլիոն տոլար: Կառավարութեան պարտքը նախորդ տարեվերջի համեմատ աճած է 10.9 տոկոսով: Հայաստանի ներքին պարտքը Յունիսի 31-ի դրութեամբ կազմած է 1 միլիարդ 085 միլիոն 537.5 հազար տոլար:

Չին Լրատուական»-ի հետ զրոյցի ընթացքին ըսած է Շիրինեան:

Վարչապետի Արցախի չերթալը Շիրինեան ճիշդ որոշում համարած է. «Լաւ է արել, ի՞նչ է՝

ծրագրել էին բողոքի ցոյցեր անել ու չստացուէ՞ց: ՀՀ իշխանութիւնը որոշումները կայացնում է իր տեսակէտով, իր հաշիւներով՝ առանց գողապետութեան ցուցումների»:

ԼՈՒՐԵՐ

Միրզոյեան Ու Բաբայեան Քննարկած Են ԼՂ Հակամարտութեան Վերաբերող Հարցեր



Հայաստանի եւ Արցախ արտաքին գործոց նախարարներ՝ Արարատ Միրզոյեանը եւ Դաւիթ Բաբայեան կը հանդիպին Երեւանի մէջ

Սեպտեմբեր 7-ին Երեւանի մէջ հանդիպած են Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեանը եւ Արցախի ԱԳ նախարար՝ Դաւիթ Բաբայեանը: Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը տեղեկացուցած է, որ Միրզոյեանը եւ Բաբայեանը ընդգծած են ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ծիրէն ներս դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացի վերակսման եւ համապարփակ ու տեսական հանգուցալուծման անհրաժեշտութիւնը:

Արտաքին գործոց նախարարները մտքեր փոխանակած են 44-օրեայ պատերազմէն յետոյ Արցախի մէջ ստեղծուած իրավիճակի եւ մարդասիրական խնդիրներու հասցեագրման ուղղութեամբ տեղւոյն կատարուող աշխատանքներու շուրջ: «Այս համաթեքսթում ԱԳ նախարարներն առանձնապատուկ կարեւորել են հայ ռազմագերիներէ եւ քաղաքացիական անձանց շուտափոխութեան առանց նախապայմաններէ հայրենադարձումը, ինչպէս նաեւ Արցախի ժողովրդի, յատկապէս՝ տեղահանուած արցա-

խահայութեան իրաւունքներէ վերականգնման եւ նրանց համապարփակ անվտանգութեան ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը», - նշուած է հաղորդագրութեամբ: Արարատ Միրզոյեան եւ Դաւիթ Բաբայեան անգամ մը եւս շեշտած են Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ եւ Արցախի Պաշտպանութեան բանակի հետ շփման գծով «ատրպէյճանական զինուած ուժերի կողմից իրականացուող սադրիչ գործողութիւնների անխտրատրեքտութիւնը, ինչը խաթարում է տարածաշրջանային անվտանգութեանն ու կայունութեանն ուղղուած ջանքերը»:

Արցախի ԱԳՆ-ը հաղորդած է, որ հանդիպման ընթացքին գրուցակիցները քննարկած են նաեւ արտաքին քաղաքականութեան ոլորտի մէջ Հայաստանի եւ Արցախի համագործակցութեան եւ տարածաշրջանային գործընթացներուն վերաբերող հարցեր: Արցախի ԱԳՆ-էն հանդիպման մասնակցած են նաեւ գլխավոր քարտուղար՝ Սեմիոն Աֆիեանը եւ ՀՀ-ի մօտ Արցախի մշտական ներկայացուցիչ՝ Սերկէյ Հազարեանը:

Երկու Հայ Ռազմագերիներ Պաքուէն Կը Վերադառնան Երեւան

Սեպտեմբեր 14-ին, Պաքուէն հայրենիք վերադարձած են երկու գերի: Պորիս Աւագեանը «Փաստինֆո»-ին տեղեկացուցած է, որ հայ գերիները վերադարձնելու համար Պաքու մեկնած է զօրավար Մուրատովը: Յիշեցնենք, որ Մուրատովը

օր մը առաջ հանդիպած էր ՀՀ պաշտպանութեան նախարարի հետ, որու ընթացքին ձեռք բերուած պայմանաւորութիւններէն ետք Մուրատովը մեկնած է Պաքու: Վերադարձող հայրենակիցներու անուններն են Արթուր Նալբանդեան եւ Արամայիս Տոռոգեան:

Երասխի Հատուածին Մէջ Հակառակորդի Կրակոցէն Ձինծառայող Ձոհուած Է

Ատրպէյճանական զինուած զորքերը՝ Սեպտեմբեր 1-ի 11:10-ի սահմաններուն, հրաձգային զինատեսակներէն եւ դիպուկահար հրացաններէն կրակ բացած է հայատրպէյճանական սահմանի Արարատի մարզի, մասնաւորապէս՝ Երասխի հատուածը տեղակայուած հայկական դիրքերու ուղղութեամբ, որու հետեւանքով մահացու հրազենային վիրաւորուած ստացած է ՊՆ Ն գործառնախ պայմանագրային զինծառայող, 1982-ի ծնունդ, կրտսեր սերժանտ՝ Գեղամ Լէովայի Սահակեանը, հաղորդած է Պաշտպանութեան նախարարութիւնը: Գերատեսչութիւնը դատա-

պարտած է ատրպէյճանական կողմի գործողութիւնները՝ նախագրու շարժումով, որ անոնք անպատասխան չեն մնար: «Իրադրութեան սրման ամբողջ պատասխանատուութիւնն ընկնում է Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան վրայ», - շեշտած է ՊՆ-ը: Պատերազմէն յետոյ, ըստ հայկական կողմին, Գեղամ Սահակեան ատրպէյճանական կրակոցէն սպանուած 10-րդ զինծառայողն է: Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը հերքած է հայկական կողմի մեղադրանքը. «Այսօր նշուած ուղղութեամբ ատր-

Լաւրով. «Տրամաբանական Կ'ըլլայ, Որ Հայաստանն Ու Թուրքիան Ձեռնամուխ Ըլլան Յարաբերութիւններու Կարգաւորման»

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրովի համոզմամբ՝ Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններէն յետոյ տրամաբանական կ'ըլլայ, որ Երեւանն ու Անգարան կրկին փորձեն բարելաւել երկկողմանի յարաբերութիւնները:

«Այժմ, երբ պատերազմը այնտեղ աւարտած է եւ դրուած են քաղաքական գործընթացի եւ բոլոր փոխադրային եւ տնտեսական կապերու ապաշրջափակման հիմքերը, ըստ ինձի, շատ տրամաբանական կ'ըլլայ, որ մեր թուրք եւ հայ գործընկերները վերսկսին յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած ջանքերը: Մենք պատրաստ ենք ամէնէն գործօն կերպով օժանդակել այդ հարցով», - յայտարարած էր Ռուսաստանի դիւանագիտական գերատեսչութեան ղեկավարը:

Նախօրէին հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած հնարաւոր ջանքերուն աջակցելու՝ Մոսկուայի պատրաստակամութեան մասին յայտարարած էր նաեւ Ռուսաստանի ԱԳՆ-ի պաշտօնական ներկայացուցիչ՝ Մարիա Զախարովան:

«Մենք արձանագրեցինք վերջերս Երեւանի եւ Անգարայի միջեւ տեղի ունեցած դրական ազդակները:

Պաքուէն Հակադարձ Է Փաշինեանի Յայտարարութիւններուն

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը արձագանգած է Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի՝ Լեռնային Ղարաբաղի անկախութեան 30-ամեակի առթիւ հրապարակուած շնորհաւորական ուղերձին:

Ատրպէյճանի դիւանագիտական գերատեսչութեան պնդմամբ, Փաշինեանի յայտարարութիւնը «հիւանդ երեւակայութեան արդիւնք է»:

«Հայ պաշտօնեանները, որքան ուզեն, կրնան կեղծել պատմական փաստերն ու իրաւական նորմերը: Անկէ, սակայն, փաստերը չեն փոխուիր: Ղարաբաղը Ատրպէյճանի պատմական տարածքն է, երկրի միջազգայնօրէն ճանաչուած տարածքի անբաժան մասը», - նշած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը՝ աւելցնելով. - «Այսուհետ ատրպէյճանական տարածքներուն ներկայացուող ցանկացած պահանջ եւ անջատական



Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով

րու փոխանակուածը, արձանագրեցինք այն առումով, որ նկատած ենք զանտնք եւ ի դիտութիւն ընդունած», - յայտարարած է Ռուսաստանի դիւանագիտական գերատեսչութեան պաշտօնական ներկայացուցիչը:

«Մենք այժմ ալ պատրաստ ենք ամէն կերպ նպաստել երկու հարեւան պետութիւններու մերձեցման գործընթացին, որ հիմնուած կ'ըլլայ փոխադարձ յարգանքի եւ իրարու շահերը հաշուի առնելու սկզբունքներու վրայ», - նշած է Զախարովան:

միտումները հրահրելու ցանկացած փորձ վճռականօրէն պիտի կանխուին արժանանալով համարժէք պատասխանի»:

Երէկ՝ Սեպտեմբեր 3-ին Արցախի անկախութեան տօնի առթիւ իր ուղերձին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսած է, թէ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը սրբազան է եւ ան չի կրնար կասեցուիլ ուժի կիրառման միջոցով:

«Հակամարտութիւնը սպառում է իր համապարփակ կարգաւորմանը՝ խաղաղ գործընթացի միջոցով, ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան կողմից առաջարկուած եւ պաշտպանուող հանրայն սկզբունքներէ հիման վրայ», - նշած է Փաշինեան՝ պնդելով, որ գործընթացի հետեւանքով պէտք է վերջնական յատկացում ստանայ Արցախի կարգավիճակը՝ ազգերու ինքնորոշման իրաւունքի հիման վրայ:

պէյճանական բանակի կողմէ որեւէ կրակոց չէ արձակուած»:

Ատրպէյճանի ռազմական գերատեսչութիւնը նաեւ հերքած է

հայկական կողմին պնդումները սահմանամերձ արտասպանութիւնները դիտաւորեալ հրդեհելու եւ անասուններ գողնալու վերաբերեալ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ՇԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Ռուսաստանի ՊՆ Ռազմական Մասնագետներու Պատուիրակութիւնը Այցելած է Հայաստան



Ռուսաստանի ՊՆ Ռազմական Մասնագետներու Պատուիրակութիւնը զօրավար-մայոր Վալերի Ժիլանի գլխավորութեամբ

Հայաստան կը գտնուէր Ռուսաստանի պաշտպանութեան նախարարութեան ռազմական մասնագէտներու պատուիրակութիւնը: Ձանոնք ընդունած է Հայաստանի պաշտպանութեան նախարար՝ Արշակ Կարապետեան:

Հայաստանի ռազմական գերատեսչութեան հաղորդմամբ՝ անոնք Հայաստան էին՝ հաշուառական երկկողմանի համագործակցութեան ծիրէն ներս հերթական բանակցութիւններուն եւ քննարկումներուն մասնակցելու նպատակով:

Ռուսաստանի պաշտպանութեան նախարարութեան պատուիրակութեան ղեկավար, զօրավար-մայոր Վալերի Ժիլան Կարապետեանին տեղեկացուցած է առաջիկայ շաբաթանու քննարկումներու եւ ծաւալի մասին, Կարապետեան իր հերթին նշած է հայկական կողմի համար առաւել կարեւոր նշանակութիւն ունեցող հարցերու շրջանակը: Թէ ինչ հարցերու շրջանակ կը քննարկուի, պաշ-

տօնական հաղորդագրութեամբ մանրամասնութիւններ չեն ներկայացուած:

Օրերս յայտնի դարձաւ, որ Ռուսաստանն ու Հայաստանը հակաօդային պաշտպանութեան (ՀՕՊ) միաւորուած տարածաշրջանային համակարգի ստեղծման մասին համաձայնագրի նախագիծ կը քննարկեն: Այդ մասին յայտարարած է ԱՊՀ երկիրներու պաշտպանութեան նախարարներու խորհրդին կից ՀՕՊ-ի հարցերով համակարգող կոմիտէի նախագահի տեղակալ, զօրավար-գնդապետ Եուրի Կրեխովը:

Ռուսական ԹԱՍՍ-ի հաղորդմամբ՝ ան նշած է, որ նման նախագիծեր քննարկուած են Խրիստիանի, Ղազախիստանի եւ Հայաստանի հետ, իսկ Ռուսաստանի եւ Տաճիկիստանի հակաօդային պաշտպանութեան միաւորուած տարածաշրջանային համակարգի ստեղծման մասին համաձայնագիրը վաւերացման փուլի մէջ է:

Արցախ կը Նշէ Անկախութեան Հռչակման 30-րդ Տարեդարձը

Սեպտեմբեր 2-ին Արցախը նշած է Հանրապետութեան օրուայ տօնը:

Տօնի առթիւ շնորհաւորական ուղերձներ յղած են Հայաստանի եւ Արցախի նախագահներ՝ Արմէն Սարգսեանը եւ Արայիկ Յարութիւնեանը:

1991-ի Սեպտեմբեր 2-ին Արցախը հռչակեց իր անկախութիւնը, նշած է Արմէն Սարգսեան՝ շարունակելով՝ «այս նշանակալի իրադարձութեան 30-ամեակը դիմաւորում ենք բարդագոյն ժամանակահատուածում՝ 44-օրեայ պատերազմից յետոյ ստեղծուած դժուարին իրավիճակում»:

Յաւակցելով պատերազմի զոհուածներու ընտանիքներուն ու հարազատներուն՝ նախագահը շեշտած է, որ համահայկական փորձութեան առջեւ ենք, յաղթահարելու համար՝ համազգային միասնութիւն ու համախմբում անհրաժեշտ է:

«Այլեւս համահայկական օրակարգի որեւէ հարցում սխալուելու իրաւունք չունենք», - եզրափակած է նախագահը:

«Մենք պատմական պարտաւորութիւն ունենք՝ ապրել ու արարել մեր սեփական հայրենիքում՝ կերտել Արցախի Հանրապետութիւնը», - իր ուղերձին մէջ նշած է Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանը շեշտելով, որ պէտք է առաջնորդուի ազգային արժէքներով, միջազգայնօրէն ամբողջութեամբ իրաւունքներով:

Կարեւորագոյն օր համարելով Սեպտեմբեր 2-ը, Արցախի նախագահը նշած է՝ «30 տարի առաջ Ստեփանակերտում գումարուած՝ ժողովրդական պատգամաւորների ԼՂԻՄ մարզային եւ Շահումեանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում հռչակուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը»:

«Պետականաշինութեան ճանապարհին մենք մեծ ձեռքբերումներ ու կորուստներ ենք ունեցել: Խոնարհուած եմ յանուն հայրենիքի ընկած նահատակների յիշատակի առջեւ: Անդառնալի են մարդկային կորուստները, միեւնոյն ժամանակ՝ պարտաւորեցնող», - ըսած է Արցախի նախագահը:

Գերմանիոյ Զբօսաշրջութեան Ոլորտի 70 Ներկայացուցիչ Կայցելեն Հայաստանի Տարբեր Տեսարժան Վայրեր



Գերմանիոյ զբօսաշրջութեան ոլորտի ներկայացուցիչներու մամլոյ ասուլիս Երեւանի մէջ

Գերմանիոյ զբօսաշրջութեան ոլորտի շուրջ 70 ներկայացուցիչ՝ շրջապատույններ կազմակերպողներ, զբօսաշրջային գործակալութիւններ, առեւտրային միութիւններ, օդանաւային ընկերութիւններ եւ լրատուական գործակալութիւններ, ժամանած են Հայաստան՝ մասնակցելու «Fvw DRV Destination Forum» միջոցառման, որուն նպատակն է ամրապնդել Հայաստանի եւ Գերմանիոյ զբօսաշրջութեան ոլորտներու միջեւ յարաբերութիւնները: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրէս»-ը, միջոցառման նուիրուած ասուլիսի ժամանակ, ՀՀ Տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան շնորհակալութիւն յայտնեց Գերմանիոյ զբօսաշրջային ոլորտի ներկայացուցիչներուն Հայաստանի մէջ «Fvw DRV Destination Forum» միջոցառումը կազմակերպելու եւ իրականացնելու համար:

Քերոբեան ընդգծեց, որ նմանատիպ միջոցառումները կարեւոր են Հայաստանի համար, քանի որ մեծ քայլով առաջ կը տանին զբօսաշրջութեան ոլորտը՝ օգնելով ոլորտի ընկերութիւններուն ընդլայնել իրենց միջազգային կապերն ու աշխարհագրութիւնը:

«Մենք մեծ կարեւորութիւն ենք տալիս զբօսաշրջութեան ոլորտում «Գերմանիոյ միջազգային համագործակցութեան» ընկերութեան հետ համատեղ իրականացուող նախագծերին եւ այս չորսօրեայ միջոցառումը վկայում է հայ-գերմանական տնտեսական եւ զբօսաշրջային կապերը զարգացնելու Հայաստանի հետաքրքրու-

թեան եւ շահագրգռուածութեան մասին», - ըսաւ Քերոբեանը:

Տնտեսութեան նախարարի խօսքով՝ զբօսաշրջութիւնը Հայաստանի տնտեսական զարգացման գերակայ ոլորտներէն է, քանի որ ան տնտեսական զարգացման ընդլայնման եւ ընդհանուր առմամբ սպառողական բաւարարուածութեան հիմնաքարն է:

«Գաղտնիք չէ, որ Եւրոպական Միութեան երկիրներից Հայաստանի խոշորագոյն գործընկերը Գերմանիան է եւ ընդհանուր առմամբ Գերմանիան երրորդ ամենախոշոր զբօսաշրջային ուղղութիւնն է: Գերմանիոյ հետ յարաբերութիւնների խորացումը Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականութեան առանցքային ուղղութիւններից է: Այդ համագործակցութեան օրակարգում առաջնային է համագործակցութիւնը հենց զբօսաշրջութեան ոլորտում», - ընդգծեց Քերոբեանը:

Նախարարը յայտնեց, որ 2019 թուականին սկսեալ Եւրոպական Միութեան երկիրներէն Գերմանիան ամէնէն բարձր աճը արձանագրած է Հայաստան այցելութիւններու քանակով:

«Այս տարի եւս նկատում ենք Գերմանիայից այցելութիւնների աճի յարաշարժութիւն, չնայած «Քորոնա» ժահրով պայմանաւորուած խիստ սահմանափակումներին: Որքան էլ, որ դրական են ցուցանիշները, կարծում եմ, որ շատ անելիքներ ունենք՝ մեր առջեւ դրուած նշանակալի հասնելու համար», - եզրափակեց Քերոբեանը:

Fly Arna Հայկական Ազգային Օդանաւային Ընկերութեան Անուանումը

Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոնտը (ԱՆԻՖ) եւ Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկէի առաջին եւ ամենամեծ պիւլտօնային փոխադրող գործարկուն՝ էյր Արապիա ընկերութիւնը, այսօր՝ Սեպտեմբեր 1-ին յայտարարեցին, որ համատեղ ձեռնարկութեան կողմէ գործարկուող նոր ազգային օդանաւային ընկերութիւնը կ'անուանուի «Fly Arna» («Ֆլայ Արնա»):

Անունը ընտրուած է համատեղ ձեռնարկութեան տնօրէններու խորհուրդի կողմէն, 2021 թուականի Յուլիսին յայտարարուած «Անուանէք օդանաւային ընկերութիւնը» մրցույթի մասնակիցներէն ստացուած աւելի քան 500 առա-

ջարկներէն: Բոլոր առաջարկներու համապարփակ քննարկումներէն յետոյ, որպէս օդանաւային ընկերութեան անուն ընտրուեցաւ «Fly Arna»-ն: «Արնա» բառը մէջտեղ եկած է «Հայկական ազգային օդանաւային ուղիներ» (Armenian National Airlines) անունէն՝ համատեղելով «Armenian» բառի առաջին երկու տառերը, «National» եւ «Airline» բառերու առաջին տառերը:

Մրցույթը նպատակ ունէր հնարաւորութիւն տալու Հայաստանի քաղաքացիներուն մասնակցելու երկրի ազգային օդանաւային ընկերութեան անուանակոչման՝ արտացոլելով ԱՆԻՖ-ի եւ էյր Արապիոյ յանձնառութիւնը:

Picsart-ը Դարձավ Հայաստանեան Առաջին Արհեստագիտական Ընկերութիւնը, Որու Արժէքը Գերազանցած է 1 Միլիարդ Տոլարը



Լուսանկարներու խմբագրման ծառայութիւններ առաջարկող Picsart-ը դարձած է Հայաստանի մէջ գրանցուած առաջին արհեստագիտական ընկերութիւնը, որու արժէքը գերազանցած է 1 միլիարդ տոլարը: Օրեր առաջ Picsart-ը յայտարարեց, որ եւս 130 միլիոն տոլար ներդրում ներգրաւած է, որու շնորհիւ ան դարձած է Հայաստանեան առաջին միաեղջիւրը՝ այսինքն՝ մէկ միլիարդ տոլար արժէք ունեցող ընկերութիւնը: Picsart-ի Հայաստանեան գրասենեակի տնօրէն՝ Միքայէլ Վարդանեան «Ազատութիւն»ին հետ խօսեցաւ իրենց արձանագրած յաջողութիւններու ու ծրագրերու մասին:

«Մեզ յաջողուեց ապացուցել աշխարհին եւ այն մարդկանց, ովքեր գումար են ուզում ներդնել ինչ-որ տեղ, որ այն, ինչ մենք սարքում ենք, պէտք է մեր օգտատէրերին, լաւացնում է աշխարհը, եւ դա մեր վերջնական նպատակը չի, եւ մենք կարող ենք քարոզանքի դա՛ այդ գումարն աւելի շատ ունենալով», - նշեց ան:

Picsart-ը նկարներու եւ տեսանիւթերու խմբագրման առաջատար հարթակ է, որ ամսական աւելի քան 150 միլիոն գործօն օգտատէր ունի՝ աշխարհի աւելի քան 180 երկրէ: Ամէն վայրկեան այս յաւելումով 600-էն աւելի մշակում կը կատարուի. «Picsart-

ով հիմա ցանկացած տեսակի թէ նկարների ու թէ տեսանիւթերի հետ կապուած աշխատանք հնարաւոր է անել՝ սկսած տարբեր տեսակի սթիքերներէ, որոնք կարող ենք օգտագործել, վերջացած ֆոնդերով, տառատեսակներով, ինչպէս նաեւ էֆեքտներով», - պատմած է ընկերութեան հեռախօսային բաժնի արտադրութեան ղեկավար՝ Կէորիկ Գէորգեանը՝ աւելցնելով. «Մենք շատ հետաքրքիր գործիչ ունենք, որը կարողանում է ինչ-որ առարկաներ շարժել: Մենք կարող ենք առարկայի ինչ-որ եզրագիծը շատ ոչ յստակ նոյնիսկ վերցնել ու իրեն այսպէս շարժել, որ աւելի ընթացքի էֆեքթ ունենանք»:

Հայ ծրագրաւորողներու ստեղծած Picsart յաւելումը ստեղծուած է 2011-ին: Տարեկան աւելի քան 100 միլիոն տոլար շահույթ ունեցող այս ընկերութիւնը ճանապարհը սկսած է՝ հաւատարմով յաջողութեան, անոր գումարելով նաեւ մեծ ջանքերն ու աշխատասիրութիւնը, եւ այսօր դարձած է Հայաստանեան տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի ամենաառաջնորդ ընկերութիւնը ու միակը, որու արժէքը 1 միլիարդ անցած է: «Մենք միշտ այս վերջին եռամսեակները ամենաբարձր 20 ամենաշատ ներբեռնուած յաւելումաճանցներու ցուցակի մէջ լինում ենք, տեղը յստակ տատանում է՝

12, 14՝ կախուած ժամանակաշրջանից, բայց արդէն իսկ, որ ամենաբարձր 20-ի մէջ ես, եւ այդ ցուցակում բոլոր յայտնի ոչ միայն լուսանկարի աշխարհից խաղացողներ կան, դա արդէն շատ մեծ ձեռքբերում է», - ըսած է Միքայէլ Վարդանեանը:

Picsart-ի ներբեռնումներու քանակը այսօր կ'անցնի 1 միլիարդի շուրջ. «Ամէն ժամանակաշրջանում տարբեր ձեռքբերումներ կան, առաջինը առաջին միլիոն ներբեռնումն էր, յետոյ առաջին ներդրումը»:

Ոլորտը շատ արագ կը զարգանայ, արձանագրած յաջողութեամբ երկար ուրախանալ չեն կրնար, կ'ըսեն անոնք: Այս յաջողութիւնը ընկերութեան մէջ արդէն անցած փուլ կը համարեն՝ հիմա առաջ կը նային նոր յաջողութիւններու հասնելու համար: Ներգրաւուած միջոցները, օրինակ, կ'օգտագործեն արհեստական բանականութեան միջոցով նորարարական լուծումներու համար: Կը մեծցնեն ընկերութեան անձնակազմը Հայաստանի մէջ ու անոր սահմաններէն դուրս:

«Picsart-ը ստեղծուել է Հայաստանում, բայց գլխամասը Սան Ֆրանսիսքոյում է այս պահին, իսկ ինչո՞ւ Հայաստանում չի, շատ պատճառներ կան, առաջինը ներդրողների պահանջն էր, եւ շատ ուրիշ խնդիրներ կային, որը Հայաստանում այս պահին հնարաւոր չէ անել», - նկատել տուած է ընկերութեան հայաստանեան գրա-

սենեակի տնօրէնը: Հայկական մէկ այլ յաջող արհեստագիտական ընկերութեան՝ Krisp-ի համահիմնադիր եւ գլխաւոր տնօրէն՝ Դաւիթ Պաղտասարեանը Picsart-ի յաջողութիւնը մեծ ձեռքբերում կը համարէ բոլոր հայկական ընկերութիւններուն համար. «Համաշխարհային ներդրողներն սկսում են Հայաստանին ուրիշ ձեւ նայել, այսինքն՝ նայել որպէս մի երկրի, որտեղ այդպիսի միաեղջիւր ընկերութիւններ կարող են ստեղծուել՝ միլիարդ կամ աւելի, ու սկսում են աւելի լուրջ վերաբերուել մեր երկրին, այսինքն՝ մեր երկրից եկող սթարթափներին, ընկերութիւններին: Picsart-ի յաջողութիւնը, ի հարկէ, շղթայական ազդեցութիւն է լինելու՝ ըստ իս, իր համար ամենադժուարն է եղել, որ գնան, ներդրումներ ստանան, մասնագէտներ ունենան, ստեղծեն Հայաստանում եւ այլն: Այդպիսի յաջողութիւնը բերելու է նրան, որ նոր սթարթափներին աւելի հեշտ է լինելու այդ նոյն ճանապարհին անցնելը»:

Picsart-ը Հայաստանի մէջ գործունէութիւնը սկսած է 10 աշխատակիցներով, այսօր աշխատակիցներու թիւը անցած է 800-ը, գրասենեակները տեղակայուած են Երեւան, Սան Ֆրանսիսքո, Պանկալո, Փեքին, Պերլին, Լոս Անճելէս, Մոսկուա, Նիու Եորք ու Թոքիօ, բայց ամենամեծ մասնաճիւղը Հայաստան է՝ 600-էն աւելի աշխատողներով:

Փաշինեան Եւ Ռուսաստանի

Շարունակուած էջ 1-էն

է Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեանը: Յիշեցնենք, որ Ռուսաստանցի համախառն հարաբերեւեւանեան այցը եղած է Պաքու, Օգոստոս 30-ին հանդիպած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար՝ ձէյհուն Պայրամովի հետ: Ըստ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան, կողմերը քննարկած են Հայաստանի եւ

Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման հեռանկարը, ինչպէս նաեւ դարաբաղեան վերջին պատերազմին յետոյ ձեռք բերուած եռակողմ պայմանաւորուածութիւններու կատարման ընթացքը, եւ վստահութիւնը ամրապնդող միջոցառումներու իրագործումը:

Խովաւեւը նշած է, թէ իր այցը Պաքու ճանաչողական բնոյթ կը կրէ: Երեւան կատարելիք այցի մասին չէր հաղորդուած:

Ռուս Խաղաղապահները Տեղակայուած Են

Շարունակուած էջ 1-էն

յաւելեալ համաձայնութիւններուն ու յաւելեալ իրաւական մեքենակաութիւններուն, ապա կողմերու միջեւ այդ հարցի վերաբերեալ նախնական շփումներ եղած են, եւ

որոշակի քննարկումներ դեռ կը շարունակուին», - ըսած է ան:

Թէ յստակ որոշ միջեւ են քննարկումները եւ ինչ ձեւաչափով՝ Ատրպէյճանի նախագահի խորհրդականը չէ յստակացուցած:

Ալիեւի Քաղաքական Կոտորներն

Շարունակուած էջ 2-էն

կառավարական տեղեկատուական հարթակում յայտնուել Լեւոնային Ղարաբաղի հանրապետութիւն ձեւակերպումը: Իսկ աւելի խորքային հարցն այն է, որ Ռուսաստանն անշուշտ լաւ է հասկանում՝ ժամանակի ընթացքում, աշխարհաքաղաքական մրցակցութեան թէժացմանը զուգահեռ, իր համար կարող է բարդանալ Արցախում խաղաղապահների ներկայութեան աշխարհաքաղաքական սպասարկումը: Ռուսաստանը բոլորովին մտադիր չէ այդ ներկայութիւնը վերածել թէ՛ տաք, թէ՛ սառը ճակատի:

Հետեւաբար, նա խնդիր ունի այդ հարցում գնալ աշխարհաքաղաքական լայն պայմանաւորուա-

Ան իր այս քառահատորեայ շարքը իրաւացիօրէն բնութագրած է «սփիւռքապատում» եւ կը խոստովանի՝ «Տխուր է վերջին գրքի վերնագիրը, սակայն ճշմարիտ է, իրականութիւնից բխած» (Քարաւանները հեռանում են)...

Ան մօտիկ եղած է հայրենի թէ խորհրդային բազմաթիւ անուանի գրողներու հետ: Կատարած է գրականագիտական վերլուծումներ եւ թարգմանութիւններ: Միշտ բարեխիղճ ու արդարադատ գնահատականներ տուած գրական աշխարհի մեծերու մասին: Ան ուշադիր հետեւած է սփիւռքեան անցու-

ղարձերուն եւ 1983-ին խոր կակիծով գրած ԱՍԱԼԱ-ի հերոս Լեւոն էքմեքճեանի կախաղանումի մասին (29 Յունուար 1983) (Անգարայի էսենպողա օդակայանին մէջ իրագործուած մարտական գործողութեան հերոս 7 Օգոստոս 1982).

...Կ'անձրեւէ, տղաս... Աշունը թաց է, Ուրկի՞ց յայտնուեց կախաղանը այս.

Գիշերը ամբողջ աչքերս Վացեմ, Քեզ որտե՞ղ տարան, ի՞նչ արիմ, տղաս:

Անխռով անցաւ մեր ողջ ցերեկը, Սինչ այնտեղ՝ ճօճուող քո մարմինն էր սառ...

Սեզ համար էիր որոնում ելքը, Սուրբուած, մուլի, սակայն մեզ համար:

Այդ դու՛ չմեռար, մենք ենք մենածը, Սենք՝ մեղկութեան մէջ յափրացած սերունդ.

Կ'անձրեւէ, տղաս... Աշունը թաց է, Թաց՝ աչքերուն պէս խեղճ, խարուած սերունդ...:

1988-ի դարավաղեան շարժման առաջին խսկ օրէն Սիլվա Կապուտիկեան գտնուեցաւ առաջին գիծի վրայ, ծովածաւալ ցոյցերու ժամանակ ունենալով բուռն էլոյթներ:

Ան գրող Զօրի Բալայեանին հետ փութաց Քրեմլին՝ ներկայացնելու Արցախի պայթուցական հարցը եւ արդար լուծում պահանջելու Խ. Միութեան ղեկավար Միխայիլ

Կորպաչեւէն: Հաւատաւոր համայնավարն ու յարգուած գրողը յուսախաՎ վերադարձաւ հոնկէ: Այս հանգրուանին, երբ ներքաշուած էր քաղաքական խճճուած հաշիւներու մէջ, սայթաքելով հակադրուեցաւ Հայաստանի ղեկավար Կարէն Դեմիրճեանին: Իր մասին Կ. Դեմիրճեանի այրին՝ Ռիմա Դեմիրճեան կը գրէ. «Սիլվան, ինչպէս բոլոր նշանաւոր բանաստեղծները, բարդ անհատականութիւն էր, կրակոտ, էմոցիոնալ», «Ինչ էլ որ անէր Սիլվան, ինչպէս էլ վարուէր, նա այդ անուամբ իր խղճի թելադրանքով, ղեկավարուելով հասարակութեան համար օգտակարութեան, արդարութեան զգացումով (զուգէ եւ ինչ որ տեղ չափազանցուած)», «Ընդդիմութիւնը նրա բնաւորութեան գծերից էր»: Այս պատճառով, որոշ շրջան մը գժտուած էին երկու

հայրենասէր գործիչները՝ պետական մեծ մարդն ու տաղանդաւոր գրողը: Սակայն... 1999 Հոկտեբեր 27-էն ետք խղճի խայթ ապրելէ ետք, հրապարակօրէն պիտի խոստովանէր «Մենք բաւարար չափով համեստ չգտնուեցինք եւ չլսեցինք մեր ղեկավարի խորհուրդները»...:(Տե՛ս,

Ռիմա Դեմիրճեան «Յիշատակ», 2012, Երեւան, էջ 288-296):

Քաղաքական առումով ան կատարիօրէն պայքարեցաւ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ղեկավարած ՀՀԾ-ին դէմ, հրապարակաւ մերժեց երկրորդ նախագահ Ռուպէր Բոչարեանի իրեն շնորհած շքանշանը, որպէս բողոք նախագահին վարած ազգային-ընկերային-տնտեսական քաղաքականութեան: Ապա, ան իր քաղաքական հայեացքները, ելոյթները, հարցազրոյցները հրապարակեց հատորով մը՝ «Էջեր Փակ Գորոցների» (1997, Երեւան, 688 էջ):

Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս, 20 Յունուար 1994-ին, Սիլվա Կապուտիկեանի մասին կը գրէր.

Սիլվա Կապուտիկեան՝ նորոգ վերածաղկում Վանայ ծովու ոգու, Սիլվա Կապուտիկեան՝ երգիչը արդար խօսքի մետրոպոլիտան լեզուով, Սիլվա Կապուտիկեան՝ պատիւը մեր տան, առնական շնչով.

Սիլվա Կապուտիկեան՝ Սուսեաց անտառը յուսոյ Հայկազեան ցեղի, ռազմի երգերով.

Սիլվա Կապուտիկեան՝ Քեզ գովք ու օրհնանք Էջմիածնի Լուսոյ խորանից:

Իսկ կարելի՞ է ոգեկոչել չիշատակ մեր ժամանակի բարեխիղճ վկային, առանց վերջի շրջան 1944-ին գրած այն պատգամը, որ ամէն աշակերտ սորված, ասմունքած, երգած է անվարանօրէն, ամէն վեմէ լսուած է եւ գրեթէ դարձած է աղօթք մը հայոց լեզուին նուիրուած.

Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես, Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, Թե՛ մօ՛րդ անգամ մտքից հանես, Քո մա՛յր լեզուն չմոռանաս...

Սիլվա Կապուտիկեան ինչպէս պիտի տառապէր արդեօք այս օրերուն, երբ քարաւանները կը հեռանան սփիւռքէն եւ յատկապէս Հայաստանէն: Երբ լեզուն մոռցող հայրդիք օրըստօրէ կը Վազմանան հոս, հոն, այլուր եւ ամէնուր...:

Խոնարհում՝ մեր ժամանակի բարեխիղճ վկայ-բանաստեղծուհի չիշատակին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :-----

Email: -----

1960

Սիլվա Կապուտիկեան եղաւ այն բախտաւոր հայրենի գրողը, որ Պաղ Պատերազմի տաք օրերուն

Մակարավանք (Յինգերորդ Մաս)

Վայ այն մարդուն, այս աշխարհուն խալխի դատած հացն է ուտուն
ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Ձկնորս Պէպօ, Քուռ գետի ջրեր իջել ձուկ որսում, ընտանիքին կերակրելու համար քաղաք տանէր վաճառելու: Աշխարհի հոգսերից, հասարակութեան այլասերումի պատճառած ցաւից տառապած Պէպօ, երգում էր իրենց ցեղի կրակաշունչ բանաստեղծ Չարենցի խօսքով ու իրենց ցեղից հրաշունչ երգահան՝ Արամ իրապատեանի-ի յօրինած երգը: Այն պատահական խօսք էր, Չարենց, խելագարուած ամբողջները տանում փրկելու աշխարհը, երկնից արեւներ վար բերում որ նոր լոյս հոսէր աշխարհին, իր նախնիների հոգուց պոռթկապած խօսքն էր ցեղի աշխատաւոր մարդկանց սրտում գարկում, ժամանակի հետ գնում դարեր: Հայ մարդը ուր գնաց տուն պատեց, քրտնաջան աշխատանքով ընտանիքի հացը վաստակեց: Հայրենազրկուած հայ, գաղթական անհող հայ, մուրացկան չեղաւ, ձեռքը չերկարեց... արաբի ու այլոց համար աշխատեց, գերդաստանից ողջ մնացածների հացը վաստակեց, մերձաւոր արեւելքում հազարաւոր անտուն մուրացկանների մէջ ոչ մի հայ մուրացկան, պատիւ ունեւ հայու ոգուն: Հեռու երկիր նկարչական մրցումի գացած յիսուն հայ փոքրեր իրենց գծած նկարների տարբեր յօրինուածքներում տուն էին գծել, իրենց ցեղի աշխարհում կարմիր քարից պատած տներ: Տուն վերադարձած թամանեան կառավարական տան համար տուն էր պատում, անցորդներ ասում թամանեանը եկեղեցի է պատում, քարն էր կարմիր, գիշերներին այն լոյս պիտի փռէր իրենց ոստանի հրապարակի չորս դին: Հայոց Տիգրան Մեծ Արքայ, իր նուաճած երկրներում պաշտպանական բերդեր կառուցեց, ճանապարհներ բացեց, ինքնավարութիւն շնորհեց, պետութեան կարիքները ապահովելու համար միայն հարկ վերցրեց, նրանց դատած հացը չկերաւ: Չթալանեց նրանց հացը, նրանց ինչքը: Անդրանիկ Փաշայ, Անդրանիկ Մեծ մարդ է, իր երթի ընթացքին թշնամու գիւղերի մարդկանց հացը չկերաւ, ով այն ուժով էր վերցնում, հրամայում գնդակահարել: Թուրքը իր ճանապարհին, մինչեւ Կոնստանտնուպոլիսի դռներ ու նրանից էլ այն կողմը թալանեց ուրիշի արարումը, ոստանի գրաւման ատեն հրամայել՝ այն երեք օրեր գինուորին, խալխի տառա-

պանքով արարուած տների պատերն իրեն...: Կ՛հ Եւրոպայի մարդիկ, չխանգարեցին նրանց երթը, հասան Աւստրիայ, բնութեան տարերքի հետ նրա մարդիկ փրկեցին թուրքի բանակը, նրանց ետ վճարեցին: Ռուսներ կռուի ելան նրա դէմ, արեւմուտքեւ նուաճել Կոնստանտնուպոլիսը, իրենց նաւերի դէպի տաք ջրեր անցնող նեղուցերը, աննպատակ պայմանագիր պարտադրեցին Ռուսին ու Հային, ետ գնացին իրենց երկիր: Թուական էր 1453, այն համարեցին միջին դարերից անցում դէպի նոր դարերի սկիզբ: Նոր դարեր, այնտեղ կատարուեց մարդկային մեծագոյն, դեռեւս անպատիժ մնացած, ոճրագործութիւնը...: մինչեւ Աւստրիա, որտեղ բնութեան տարերքի հետ նրա մարդիկ փրկեցին թուրքի բանակը, նրանց ետ վճարեցին, Ռուսներ կռուի ելան նրա դէմ, արեւմուտքի Պէպօ, աշխատաւոր Պէպօ, ինչքա՛ն Պէպօների հոգիներ բզկտեցին, ատեաններում իրաւունք որոնելու համար ընթացեց Պէպօներ կալանատուն տարան, նրանց պատուհանների առաջ աշխատաւոր հայերի քաջ երգերի որոտներն էին երկիրը պատում... հասնու՞մ էին «տիրոջը»...: Չէ... ասացէ՛ք, հարուստի փողը վաստակ...: Եօղունուրեցի աշխատաւոր մուսա լեռցիի դազգահի առաջ կքած սանտրագործի աշխատանքը նրա աչքի լոյսն էր, գիւղի մեծահարուստը նրանց լոյսն էր գողանում, հարուստի անաշխատ եկամուտը գողութիւն է, տղան ինձ պատմում էր, որ իրենց վաճառած այդ սանտրերի դիմաց խոշոր տոպրակներով փող էին ստանում... հաւատում եմ, բնութեան մի անանցանելի, անբացատրելի ինչ որ կանոնական երեւոյթ պատժում է խալխի դատած հացը ուտողին... Մուսա Լեռան հարուստ մարդիկ իրենց գողացած քրտինքի դրամը շատ անգամներ կալուածի վերածել, աշխարհի մեծեր այն թուրքին տուել... աղքատացան: Հայոց փոքրացած երկիր, հայեր իրենց երկրի մի մասի վրայ յաղթողի իրաւունքով իրենց հին պետութիւնը վերականգնեցին, անզգամ ու մարդ կոչուելու անյարիր մարդ, ամիսներով աշխատաւորի վաստակը չհատուցանելը, իրենից հաց հայցող մանչուն հացն են գողացել, անաշխատ եկամուտը հարստութիւն է, գողութեան է: Հիմա տեսնում էք ինչ է պատահում Հայոց աշխարհում, գողացածի յայտնաբերում

մասը վերադարձնում են, ու... կալանատուն: Հայոց աշխարհում Հայ շինականի հողին թափած քրտինքը դեռ թաց է... շինականների յետնորդներ կը գան իրենց երեսները շոյեն նրանով...:

Կիպրոս կղզի, երիտասարդ կեանքիս ծաղիկն էր բուսել տեղի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնում, որտեղից ուսեալ մարդու վկայականը ձեռքից մտել կեանք, վայելում իննսուն ու աւելի ամեայ տառապանքով ու արեւի լոյսով ու լի սիրով քաղցրացած կեանքս: Արեւմուտքի այրեր, իրենց երկրների շահերի համար անխօս թուլատրել, որ 1974 թուականի Յունիսի մի առաւօտ, Թուրքը մեծ բանակով ներխուժէր Կիպրոս կղզի, այն շատ մօտ էր Կիլիկիայի ափերին ու քաջերի երկիր իմ ծննդավայր Մուսա Լեռան: Հասել էին Կիպրոսի հանրապետութեան մայր ոստան, նրա կեդրոնական Լիտրա պողոտան դարձել թուրքի ու Կիպրոսի հանրապետութեան գրաւեալ մասի սահման: Թուրքի գաւթած տարածքում հիմնադրել՝ Կիպրոսի Թրքական Հանրապետութիւն, աշխարհ անցել յայտարարելով, որ Արցախի Հանրապետութիւնը օրինական է:

Կիպրոս կղզի, հազար-հազար դարեր առաջ այնտեղ թագաւորել էին Ֆրանսական ծագումով Լուսինեան գերդաստանի իշխաններ, որոնց շառաւիղները մինչեւ հիմա էլ յարատեւում իրենց մայր երկրում: Լուսինեանների Լեւոն իշխանը, թագաւոր եղաւ Կիլիկիայի, նրա վերջին թագաւոր Լեւոն Զ.: Երկու տարի յետոյ Եգիպտոսի Մամլուքների հետ կռիւ եղաւ, պարտուեց Լեւոնը, նրա կռուին ոչ ոք օգնեց: Յիշել էին նրան, Հայաստանի ու Փրանսիայի նախագահներ Լեւոն Տէր Պետրոսեան ու Միտերան, 1996 թուականին, նրա մահուան 600 տարելիցի առթիւ, այցելել Փարիզի մօտ գտնուող մատուռի տակ հանգչող նրա գերեզմանը:

«Ուտելու հաց չունեն, եկեղեցի են պատում, խելքին աչեցէք» գրել մեծ փիլոսոփայ Աշուղ Զիւլաին: Կոնստանտնուպոլիսի Պատրիարքարանը հաւաստել էր, որ իրենց պահոցի տուեալներով Արեւմտեան Հայաստանում մօտաւորապէս երեք միլիոն հայեր էին բնակում, շէն ոստաններով, արտերով ու այգիներով, ցորեանի ծովակներով, երկու հազար հինգ հարիւր վանքերով ու եկեղեցիներով, երկու հազար ու աւելի սիրուն շէներով, բազում մանչերի դպրոցներ, քերթողներ, ի՛նչ ասեմ, որ մէկը թուեմ: Տարին էր 1914, աշխարհում կռիւ էր, նրան մասնակցել էր իշխանութիւնը գաւթած «Երիտասարդ Թուրք»երի կառավարութիւնը: Սպաննեցին հայերի միտքը, իր հողում ապրող Հայ սպանները յանցանք չհամարեցին, մի քանի ամիսների ընթացքում գէնք կրելու ընդունակ հազարաւոր տղամարդկանց բանակ գորակոչեցին, գինուորին գէնք կրել չվստահեցին, դաժան աշխատացրին՝ ապա սպաննեցին: Անուժ տղամարդկանց ու կանանց իրենց գաւակների հետ պոկեցին հարենի շէներից, տարագրեցին, հրեշտակային մանչեր ջուր ու գեցին, ջուր խմեցին ճանապարհների փոսիկներից, եղնիկներ դարձած սլացան հայոց լեռներ,

մահուան կարաւաններով քչեր հասան արաբական անապատներ: Տարագրութիւն, ամենասարսափագրու միջոցներով մահերգութիւն, եղերերգութիւն եղաւ, սակայն ով չէր ուզում մեռնել չմեռաւ: Հայը չուզեց մեռնել, վերջին կռիւ՞ւ, է՛, թշնամու դէմ կռուի ելան Սարդարապատի դաշտում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսում: Հայը կռոււմ սպաննեց իրեն սպաննելու եկած թշնամուն, ուզում դաշտից փախաւ թուրքը, ետին թողնելով երեք հազարից աւելի զարնուած գինուոր, սպաննեց հեռու Դարդանելի ափերին դաշնակիցների բանակներին պարտութեան մատնած Վէհիպ փաշայի զօրախումբը: Հայը, իր պատմութեան շառաւիղների ընթացքում մղած բազում ճակատամարտերում՝ հայրենի հողի, ցեղի մարդկանց ու իրենց կանանց պատուի համար կռուել, յաղթել թշնամուն: Հաւատաց Պարսիկի, Հոռվմէյացու, Բիւզանդացի Յոյնի, թուրքի ստապատիր խօսքին... խաբուեց, տանուլ տուեց կռիւը:

Պատմութիւն եղան հազար տարիները, Թուրքը յայտարարել էր, փլոււմ է մի շքեղ տաճար, հայեր գալին այն նորոգէին, չգնացին, նրանց ասացին, որ որպէս նուաճողներ իրենք նորոգէին այն, ինչպէս որ նորոգել էին Վանայ ծովի Սուրբ Խաչ տաճարը, արտօնել տարին մէկ անգամ պատարագ անել, պատարագել էին Վանի ապստամբութեան կռուում ընկած քաջերի հոգիների հանգստութեան, շրջանում սպաննուած հայերի հոգիների անմեղութեան լոյսը: Վանայ քաղաքի քաղաքապետը արգիլել էր շրջանի զօրախումբի սպանել տաճարը, փլել այն, մարել մարդկային քաղաքակրթութեան լոյսի մի անմար ջահ: Հայեր, գնացէ՛ք փլելուց փրկէ՛ք եկեղեցին, եկեղեցիները, դպրոցները, Կարինի-էրզրումի Սանասարեան ուսման տաճարը որ ապագայի ոտք դնելու տեղ պատրաստէք ձեզ համար: Արեւմտեան Հայաստանում փլած տներ, փլած վանքեր պահում են յուշը անցեալի, յուշ թողեցինք մեր տները ու աղօթատեղիները, արտերն ու այգիները, դպրոցները, նրանց յուշը այրում են մեր հոգիները, կանչում հասնել իրենց, նորոգել իրենց, հայեր գան եկեղեցիներում նորէն մկրտութիւն անեն, հայեր գան հայրենի հողի վրայ նորէն աղօթեն, դպրոցներում մանչերի ծիծաղ, այգիներում ծաղիկ, արտերում ցորեանի ծովեր, սրբացած նահատակների հոգիներին լոյս վառելու:

Թուրքը, Արեւմուտքի քաջալերութեամբ, Կիպրոսի Հանրապետութեան հետ կռոււմ գաւթել կղզու մէկ երրորդը, այնտեղ գտնուում հայկական Մակարայ վանքը: Չաւթել էին Մակարայ վանքը, ինչպէս ամէնուրեք, նաեւ աւերել այն, թալանել նրա պահուստներում պահպանուած հազուագիւտ ձեռագրեր ու կրօնական մատուցանքներ: Կիսաքանդ վիճակում է այն, ամայի է վանքը, խուցերը առանց տանիքի, պատերը կիսափուլ, նրանց վրայ կոտորուած խաչերով քարեր, կողոպտուած պատհոսանքներից ու դռներից սուլում է քամին, աշխարհին կանչում՝ թուրքն է այդտեղից անցել:

(Շարունակելի)

Մեծ Իրաքէն Փոքր Հայաստան

«Կեանքը տարբեր էր Իրաքի մէջ: Շատ բարգաւաճ գաղութ էր, եւ լաւ կեանք ունէինք»:



ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՍ

Անդօ եւ Շաքէ Արամեաները Ալմեյօ, Հոլանտա հասած են Իրաքէն՝ 2012 թուականին: Անոնք կու գան Պաղտատէն: Անդոն ինքնաշարժներու մասնագէտ-վարպետ եղած է:

Յստակ է, թէ անոնք ինչո՞ւ այդ «տարբեր կեանքը» ձգելով եկած են Ալմեյօ՝ նոր կեանք մը սկսելու: Իրաքը եւ հաւանաբար միջինարեւելեան մնացեալ բոլոր երկիրները իրենց քաղաքական, տնտեսական եւ ընկերային դժուարութիւններով եւ պայքարով կը ստիպեն որ մարդիկ դիմեն դժուար ընտրանքներու: Իսկ դժուար ընտրանքը, այս պարագային, լաւ կեանքը ձգելով ուրիշին անցնելն է. աւելի լաւի՞ն...

Ալմեյօ Հոլանտայի արեւելքը գտնուող գեղեցիկ քաղաք մըն է: Հոլանտան ամբողջ ինքնին գեղեցիկ է: Թէեւ լեռներ չունի, բայց անոր կանաչ մարգագետիններն ու անտառները ծածկած են երկրին ամբողջ տարածքը եւ անոր կու տան յատուկ գեղեցկութիւն: Իսկ կանաչ մարգագետիններու վրայ կ'արածին նաեւ անասունները՝ ստեղծելով ներդաշնակ կեանք մը՝ մարդ, բնութիւն եւ անասուն միաձուլուած: Ալմեյօն անմասն չէ ամբողջ երկրին այս գեղեցկութենէն: Եթե թանապուստ եւ երկու հազար բնակչութիւն ունեցող այդ գեղեցիկ քաղաքը նաեւ առիթը տուած է հայկական իրականութեան մը ստեղծումին՝ մօտաւորապէս վեց հազար մարդ հաշուող գաղութով: Այս վեց հազարը, ինչպէս Անդոն մեր գրոցի ընթացքին յաճախ կրկնեց, «Փոքր Հայաստան» մըն է:

Շաքէին ընտանիքը եւ հարազատները Հայաստան հաստատուած են: Մեր խօսակցութենէն արդէն կը նկատէի, թէ կը գրուեցի գոյգի մը հետ, որոնց մէջ հայկականութիւնը շատ ամուր կերպով խարսխուած է: Բայց այդ միայն իրենց անձնական եւ ընտանեկան կեանքին համար չէ: Անոնք այս երոպական «ազատ» աշխարհին մէջ կ'ուզեն իրենց հայկականութիւնը բաժնեկցել իրենց շրջապատին հետ:

«Ժամանակի թաւալումին հետ որքան հայ սերունդները կը փոխուին, հայութեան հետ կապը կը տկարանայ: Չափազանց ազատութիւնն ալ շատ օգտակար բան մը չէ եղեր: Նոր սերունդին մէջ շատ միտում մեծ գտում կայ առնչուելու տեղացի ժողովուրդին հետ»: Շաքէն հայ մայրն է, որ կը գիտակցի իր հայկական ինքնութեան կարե-

ւորութեան եւ գայն նոր սերունդին փոխանցելու անհրաժեշտութեան: Ան երկար տարիներու փորձառութիւն ունի ազգային կեանքի մէջ, մաս կազմած է Հայ օգնութեան միութեան, ուր տակաւին գործօն անդամ է եւ կրնայ լաւապէս տեսնել հայկական իրականութեան ներկայ ընթացքը:

Բաֆֆի թերգեանը 1993 թուականին եկած է Պաղտատէն: Ան վկայուած է Պաղտատի համալսարանի տնտեսագիտութեան բաժանմունքէն: «Հոլանտա չկրցայ գործ մը գտնել, քանի որ վկայական կարելի չէր վաւերացնել»: Այս ալ այլ մարտահրաւէր մըն է նոր երկիր երթալու ընտրանքին մէջ: Բաֆֆին ՀՄԸՄ-ի պատասխանատու անդամներէն մէկն է: Նուիրուած հայ մը, որ կ'ուզէ հայ երիտասարդը ամէն գնով կապել հայկականութեան: «Արաբական աշխարհին մէջ հպարտ էինք մեր հայկական ինքնութեամբ: Հոս՝ Եւրոպայի մէջ, տարբեր է: Երիտասարդները շատ աւելիով կ'ուզեն նմանիլ եւ յարմարիլ տեղական պայմաններուն: Այս իմաստով շատ դժուար է երիտասարդները հայկական իրականութեան հետ առնչելը»:

Բայց Բաֆֆին լաւատես հայ է: Ան պատասխանատուութիւնը ստանձնած է կազմակերպելու համար տարբեր մարզական խաղեր եւ խումբեր՝ այդպիսով հայ երիտասարդները առնչելու համար հայկական իրականութեան: «Ֆուտպոլը կը հրապուրէ երիտասարդները», ըսաւ Բաֆֆին, որուն դէմքին վրայ գծուած պզտիկ ժպիտին մէջ չկայ կրցայ տեսնել յուսահատիլ չճանչցող հայ մարդը:

Ան հայ է երեք զաւակներու: Երեք պատանի-երիտասարդներ մեծցնելը Արեւմուտքի «ազատ» համակարգի մէջ ունի իր մտահոգութիւնները՝ յատկապէս ներկայ օրերու ապակրօն կարգավիճակներու մէջ: «Չաւակներուս անդադար պէտք է սորվեցնեմ, թէ ի՞նչ է ճիշդը եւ ի՞նչ է սխալը»: Տան դաստիարակութեան հաւատացողն է Բաֆֆին, որ կը փորձէ ամէն գնով զաւակները լաւ հայ մեծցնել:

1998 թուականին Բաֆֆի փոխադրուած է Ալմեյօ: «Ուզեցի ապրիլ քաղաքի մը մէջ, ուր հայութիւն կայ: Հայութիւնը ունէի եւ ուզեցի ապրիլ հայերու հետ»: Սկսայ տեսնել, թէ կը խօսիմ չափահաս հայու մը հետ, որ ունի հայութեամբ տրոփող սիրտ մը: «Հայութիւնը ամէն ինչ է ինձի համար», շարունակեց Բաֆֆի: Եւ

այս «ամէն ինչի» տեսլականին համար կան մեծ գոհողութիւնները, որոնց լաւապէս կը գիտակցի ան: Կարելի չէր չգրուեցի արցախեան քառասունչորս օրերու պատերազմին մասին: Կը խօսէի ոչ միայն տոկոսն նկարագրող հայերու հետ, այլ նաեւ ու նոյնքան՝ մտահոգ: «Հայութիւնը էութիւն է ինձի համար, - ըսաւ Անդոն: □ Առաջին քրիստոնեայ ժողովուրդն ենք»: Անդոն կեանքին մէջ երկու բեռ շաղկած մարդն է: Մէկը մարդու բեռն է, միւսը՝ հայուն, ինչպէս որ ան բացատրեց: Այս երկու բեռերը ան կը շարունակէ շաղկել իր ուսերուն՝ իբրեւ «քաղցր լուծ»: Բայց այս բեռն տակ չկրկնու համար կը հաւատայ հայրենիքի գորութեան: «Հայրենիքը մեր արմատները կը պահէ եւ մեզ կը զօրացնէ», ըսաւ ան:

Արցախեան վերջին պատերազմը ծանր ճնշած է Անդոյին վրայ: «Հոգեկան հիւանդ պիտի դառնանք», ըսաւ ան՝ յուզումով: «Շատ անգամ կը մոռնամ», շարունակեց Անդօ, իսկ մոռնալէ աւելի կայ մտահոգութիւնը... «Հայրենիքը մեր ձեռքէն կ'երթայ, եւ չենք կրնար բան մը ընել», աւելցուց ան: Կը նախ մ'Ռաֆֆիին ու Շաքէին դէմքերուն, անոնք նոյնպէս կ'արտայայտէին Անդոյի մտահոգութիւնը:

Ալմեյօյի մտահոգութիւնը... Բայց հայկական ո՞ր անկիւնէն եւ աշխարհի ո՞ր տարածքին՝ չկայ Անդոյին մտահոգութիւնը: Հայրենիքի եւ անոր բարօրութեան մտահոգութիւնը: Հայրենիքը, որ մեր ձեռքէն կ'երթայ... Բայց ո՞չ, հայրենիքը պիտի մնայ: Կայ Ալմեյօյի հայուն վճռականութիւնը:

Նուպար Մարտիրոսեան 1990 թուականին Պաղտատէն եկած է Ալմեյօ: Ան եղած է հիմնադիր անդամ ՀՄԸՄ-ի՝ 1997-ին: «Այս գաղութը մեզի համար փոքրիկ Հայաստան է», ըսաւ Նուպար, բայց փոքր Հայաստանը եւ գայն պահելը միայն խօսք չէ: Նուպարը ընդհանուր պատասխանատու-մատակարարն է ՀՄԸՄ-ի նորակառուց մարզական-մշակութային կեդրոն-համալիրի շինարարական աշխատանքին:

Նուպար ոչ միայն համբերութեամբ, այլ նոյնքան բժախղորութեամբ եւ մանրամասնօրէն ցոյց տուաւ ինձի նորակառուց կեդրոնին տարբեր բաժինները: Բաւական գործ իրականացած է: «Եթէ համավարակը չըլլար, արդէն պիտի ամբողջացնէինք շինարարութիւնը», ըսաւ Նուպար:

Կը տեսնէի, բայց նաեւ կը զգայի Նուպարին միտքը, եւ թէ ինչպէս արհեստագիտութեան ամէնէն նորարար հնարքներով կ'ուզէր լաւագոյն համալիրը մէջտեղ հանել: Միտքէն աւելի, կը տեսնէի որ ան իր սիրտն է, որ դրած է համալիրին մէջ: Նուպարը հայն է՝ վճռական, որ կ'ուզէ տեսնել, թէ այս շինարարական գործը պիտի ամբողջանայ: Մօտաւորապէս վեց հազար յիսուն մեթր քառ. հողաչերտի վրայ Ալմեյօյի հայերը կը փորձեն այս համալիրը իրականացնել:

Բաֆֆին, Շաքէն եւ Անդոն ալ կ'ընկերակցէին ինձի: «Այս կեդրոնը պիտի իրականացնենք, որպէսզի հայութիւնը հպարտ զգայ», ըսաւ Բաֆֆի:

Կը խօսէի նուիրեալ հայերու հետ, որոնք կը հաւատան կառուցիին եւ անոր դերին՝ հայապահպանումի մեծ առաքելութեան: «Կը յուսամ, որ մեր երիտասարդները այս

կառուցին տէրը ըլլան եւ մնան», ըսաւ Նուպար:

ՀՄԸՄ-ի այս նորակառուց մարզական-մշակութային համալիրը փոքր Հայաստան մըն է, իսկ փոքր Հայաստանի ապագո՞յցը:

Նուպարին խանդավառութիւնը հասաւ բարձրագոյն մակարդակի, երբ ան ցոյց տուաւ համալիրին երկու կամարները, որոնք լեռան մը ձեւաւորումը ունին: «Այս ալ ըրինք, որպէսզի մեծ ու փոքր Մասիսները պահենք», ըսաւ Նուպար:

Հպարտ Նուպարը: Անպայմանօրէն հպարտ Ալմեյօյի հայերը:

2003 տարին հիմնուած է Հայ առաքելական Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որուն շուրջ համախմբուած է հայութիւնը: Պէտք է գիտնալ, թէ իւրաքանչիւր կիրակի օր ս. պատարագին հոծ բազմութիւն մը ներկայ կ'ըլլայ: Հայուն քրիստոնէական հաւատքը եւ ազգային ինքնութիւնը միշտ ալ զուգորդուած եղած են պատմութեան առանցքին: Եւ այս երկուքը պահելու համար եկեղեցին միշտ ալ կեդրոնական տեղ գտած է հայութեան մէջ: Նաեւ՝ Ալմեյօյի մէջ:

Օննիկ Կելիճին Թուրքիայէն եկած է 1971 թուականին: Ան կու գայ Շըրնաք գիւղէն՝ Իրաքի սահմանը: Օննիկ ատենապետն է եկեղեցու վարչութեան: Ստիպուած էի Օննիկին հետ խօսիլ քիչ մը անգլերէն եւ քիչ մըն ալ «կոտորուած» իմ թրքերէնովս: «Մեր գիւղին մէջ ունէինք հայկական դպրոց մը, ուր Յեղասպանութենէն ետք արգիլուած էր հայերէն սորվեցնել, - ըսաւ Օննիկ, - միայն քրտերէն եւ թրքերէն ստիպուած էինք խօսիլ»:

Օննիկ նուիրուած հայն է, որ շատ ժամանակ կու տայ հայ եկեղեցու եւ ընդհանրապէս հայութեան: «Ես հայերէն չսորվեցայ, բայց հայերէն կը սորվեցնեմ», ըսաւ Օննիկ: Ան ունի երկու զաւակներ, որոնք Ալմեյօյի մէջ հայերէն սորված են ու կը խօսին:

Օննիկ գործին եւ առաքելութեան հաւատացող մարդն է: «Ժամանակ չեմ ուզեր վատնել եւ նեղուած մնալ, որ հայերէն չեմ գիտեր, - ըսաւ ան, - ես կ'ուզեմ աշխատիլ եւ օգտակար ըլլալ հայութեան»: Ան վերջին տարիներուն կ'օգնէ, սուրիահայերուն, որոնք ապաստան կը փորձեն գտնել Հոլանտա, որպէսզի անոնց կեցութեան իրաւական կարգավիճակները ըստ պատշաճի դասաւորուի:

Հայկական եկեղեցու շրջափակին մէջ կան շատ խաչքարեր: Բայց այն, ինչ որ զգացական է, յատուկ մասն է, ուր գեղեցկուած են բազմաթիւ խաչքարեր կիսակլոր տարածքի մէջ՝ յիշատակելու համար Հայոց ցեղասպանութեան զոհուած հայորդիները: Եւ իւրաքանչիւր խաչքարի վրայ արձանագրուած է Պատմական Հայաստանի եւ Կիլիկիոյ քաղաքներու անունները: «Այս ալ կառուցեցինք, որպէսզի ցոյց տանք հանրութեան եւ Հոլանտայի ժողովուրդին, որ Յեղասպանութիւնը իրական է», շեշտեց Օննիկ:

«Հայապահպանումը շատ դժուար առաքելութիւն է, մանաւանդ՝ նոր կազմուող գաղութներու պարագային»: Մինաս Արսէնեանն ալ կու գայ Պասարայէն՝ Իրաք: 1996-ին հասած է Ալմեյօ: ՀՄԸՄ-ի Ալմեյօյի մեկուսի վարչութեան ատենապետն է եւ կը գիտակցի իր ստանձնած պարտականութեան կարեւորութեան եւ պատասխանա-

Արցախի Նոր Թատերաշրջանը Բացուեցաւ «Երկինքէն 3 Խնձոր Ինկաւ» Բիեսով

Թատերական կեանքը վերսկսած է Արցախի մէջ: Արդարեւ, մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ, թատրոնը վերսկսած է իր գործունէութեան: Առաջին անգամ ըլլալով, բեմադրուած է «Երկինքէն 3 Խնձոր Ինկաւ» բիեսով, հիմնուած Նարինէ Աբգարեանի նորավէպի հետեւողութեամբ: Այս նորավէպը որդեգրուած եւ բեմականացուած է Նիւ Եորք հաստատուած տնօրէն բեմադրիչ եւ դերասանուհի Կարինէ Քոչարեանի կողմէ: ՍՈՆ թատերախաղին մէջ զեղեցկօրէն պատկերուած է Արցախի լեզուն, գիւղը, ժողովուրդի տառապանքը, սէրը եւ մանաւանդ յոյսը: Ծրագրուած է նաեւ այս բիեսը ներկայացնել 11 անգամ Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ:

Հայաստանի Պետական Սիմֆոնիք Նուագախումբ Կը Մասնակցի Տուպայի Երաժշտական Փառատօնին

Այս օրերուն Տուպայի Օփիփրայի եւ Գօգա Գօլա մարզահանալիւրի դահլիճներուն մէջ տեղի կ'ունենայ դասական երաժշտութեան միջազգային 10րդ փառատօնը: Օգոստոսի 28ին սկսած սոյն մեծ միջոցառումը պիտի շարունակուի մինչեւ Սեպտեմբեր 26: Այս առթիւ ելուցիւններ պիտի ունենան 37 նշանաւոր երաժիշտներ, 7 հռչակաւոր նուագախումբեր, կատարողութեամբ 12 անուանի խմբավարներու: Տուպայի բազմաբնոյթ դահլիճները իրենց տարողութեամբ մեծագոյնն են Միջին Արեւելքի մէջ: 10րդ փառատօնը իրագործողներն են Մշակույթի Աջակցող Եւրոպական Հիմնարկութիւնը, համագործակցութեամբ SAMIT Event Group-ին: Փառատօնին պիտի մասնակցին Ռուսիոյ Ազգային նուագախումբը, Երուսաղէմի սիմֆոնիք նուագախումբը, Գերմանիոյ պետական ֆիլհարմոնիքը, Հայաստանի պետական սիմֆոնիք նուագախումբը եւ այլ նշանաւոր նուագախումբեր, որոնք պիտի ներկայացնեն համերգային ալլադան յայտագիրներ: Իսկ մենակատարողներուն մէջ կը նշմարուին աշխարհահռչակ արուեստագէտներ: Grammy Award եւ այլ մրցանակակիրներ: Հայաստանի պետական սիմֆոնիք նուագախումբը պիտի ղեկավարէ տաղանդաւոր խմբավար Սերգէյ Սմբատեանը, որ արդէն համաշխարհային համբաւի տիրացած է:

Էլիզապէթ Բ. Թագուհին Եթէ «Մահանայ...»

Անցեալ շաբաթ միջազգային մամուլը լայն տեղ տուաւ լուրի մը, որ կ'առնչուէր էլիզապէթ Բ. թագուհին: Թագուհին դեռ ողջ-առողջ է, բայց մամուլը ձեռք բերած է արտակարգ միջոցառումներու այն ծրագիրը, որ գործադրութեան պիտի դրուի թագուհիի մահէն անմիջապէս ետք...:

Այսպէս՝ Պէքինիցէմ պլատի ամենէն տարջոտ պաշտօնեան մահուան լուրը պիտի հաղորդէ երկրի վարչապետին: Տասը վայրկեանի մէջ երկրի բոլոր դրօշակները կ'իսով պիտի վար իջեցուին: Արքայական պալատի ընկերային ցանցերու կայքէջերը սեւ էգրան պիտի ունենան: Մէկ վայրկեանոց յարգանքի լուծութիւն պահելէ ետք նոր թագաւորը Զարլզ, ժամը 18:00ին երկրի ժողովուրդին պիտի փոխանցէ իր պատգամը: Թագուհիին դագաղը յուղարկաւորութեանէն առջջ պիտի ցուցադրուի ժողովուրդը պիտի արկենայ արգանքի տուրք մատուցանել: Հաւանական ահաբեկչութիւնները կանխիկելու համար ապահովութեան արտակարգ միջոցառումներ պիտի գործադրուին ամբողջ երկրի տարածքին:

Երգչուհի Սիպիլ Հայաստանի Մէջ

Այս օրերուն Հայաստան կը գտնուի պոլսահայ շնորհալի երգչուհի Սիպիլ: Ան վերջերս Երեւանի մէջ մասնակցած է անուանի երգչուհի Լուսինէ Քոչեանի 100-ամեակի նուիրուած հանդիսութեան: Սիպիլ ներկայիս Երեւան կը գտնուի նոր ծրագիրներու համար:

Մեծ Իրաքէն Փոքր Հայաստան

Շարունակուած էջ 13-էն

Հայասպահայանումը պիւրութիւն տարածքին դժուար առաքելութիւնն է: Ալմելոյի մէջ ալ, ինչպէս՝ իմ այցելած բազմաթիւ այլ գաղութներու, պարագան տարբեր է: Եթէ ամէն տեղ հայ կայ, բայց նոյնքան նաեւ՝ մարտահրաւէր: Հայասպահայանումի մարտահրաւէրը: Եւ կարելի է

Ապաքինման Մաղթանք

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԱՑԵԱՆ վերջերս վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուելէ ետք այժմ տուն փոխադրուած է եւ կը բոլորէ ապաքինման շրջանը: Շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում կը մաղթենք իրեն:

Գրաւուած Օր

«Մասիս» Շաբաթաթերթի նախաձեռնութեամբ յառաջիկայ Նոյեմբերի 17ին, 2021, տեղի պիտի ունենայ Տօթ. Արշակ Գազանճեանի «Մեր Դիտանկիւնէն, Ազգային Մտորումներ, Կեցուածքներ» գիրքի շնորհանդէսը: Կը խնդրուի չի խաչաձեւել:

ՄԱՐԱԶԴ



Տ. ԱՍՈՂԻԿ Ա.Ի. ՔՀՆՅ. ԺԱՄԿՈՉԵԱՆ (1953-2021)

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ հարազատին հոգելոյս Տ. Ասողիկ Ա. ՔՀՆՅ. Ժամկոչեանին մահը, որ պատահեցաւ Օգոստոս 28, 2021ին:

Հոգելոյս Տէր Հօր վերջին օծման կարգը տեղի պիտի ունենայ Երկուբաշթի, Սեպտեմբեր 13, 2021ին, Պըրպէնքի Առաջնորդանիստ Ս. Ղեկնդեանց տաճարին մէջ, առաւօտեան ժամը 10:00ին, 3325 North Glenoaks Blvd. Burbank: Իսկ յուղարկաւորութեան թաղման կարգը տեղի պիտի ունենայ նոյն օրը Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Երէցկին Սոնա Արապաճեան-Ժամկոչեան
- Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Արամ Ժամկոչեան
- Զաւակը՝ Տիար Ասպետ Ժամկոչեան
- Զաւակը՝ Տիար Գէորգ Ժամկոչեան
- Եղբայրը՝ Տիար Յակոբ Ժամկոչեան
- Տէր եւ Տիկ. Վահան եւ Արտեմիս Թաթարեաններ եւ զաւակունք
- Զապէլ Արապաճեան
- Տէր եւ Տիկ. Յովակիմ եւ Սիրարփի Տէրտէրեան
- Տէր եւ Տիկ. Արվանիթօբուլոս եւ զաւակուն
- Սօֆիկ եւ Ռէպէլա Քինդանա
- Տիկ. Լիսա Մուսթաֆեան եւ զաւակունք
- եւ համայն հարազատներն ու բարեկամները Հայկէպէն, Յունաստանէն, Աւստրիայէն, Գանատայէն եւ Գալիֆօրնիոյ շրջաններէն:

Ցաւակցական

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր եղբօր ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին:

Ցաւակցական

ՍԱՐԳԻՍ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Թաղէոս եւ Նորա Քէրողլեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Գուգուեաններուն եւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեաններուն:

անտեսել այս իրականութիւնը, որքան ալ դժուար ըլլայ այդ մէկը:

Բայց պէտք է կառչիլ եւ հաւատալ գործին:

Ալմելոյի մէջ կիրակնօրեայ դպրոցի ծրագիր հիմնուած է: «Սօսաւորապէս վաթսուն պատանի ունինք»: Շաբէն է գրողը, որ երկար տարիներ իր մասնակցութիւնը բերած է՝ դասաւանդելով հայերէն: «Իրաքահայեր, թրքահայեր, սուրիահայեր եւ Հայաստանէն եկած՝ բոլորը կ'ուզեն, որ հայերէն սորվին եւ մայրենին պահեն», եզրակացուց Շաբէն:

Ալմելոյի հայերը կարիքը կը տեսնեն հայկական միօրեայ վարժարանի մը հիմնումին: Արդէն իսկ սկսած են խորհրդածել, թէ ինչպէ՞ս կարելի է յաջողցնել այս գործը:

«Պիտի իրականացնենք այս ծրագիրը», ըսաւ Մինաս՝ հպարտ ու վճռական: «Ազգային ինքնութիւնը հայուն վերապրելու եւ մեր կեանքի շարունակականութեան գրաւական է: Թթուածին է, առանց որուն՝ կարելի չէ ապրիլ», եզրափակեց ան: Այս թթուածինի համար պէտք է եկեղեցի, համալիր, նաեւ... դպրոց: Թէ՛նէ հրաժեշտ պէտք էր տայի

Ալմելոյի խմբակին, բայց կար սրտիս մէջ ուրախութիւն, գոհունակութիւն եւ հպարտութիւն: Քանի մը ժամ անցուցած էի հայրողիներու հետ, որոնք եկած էին մեծ իրաքէն: Հոն, ուր բոլորն ալ ուրախ էին եւ խաղաղ... Մինչեւ այն օրը, երբ ստիպուած եղան լքելու ամէն ինչ...:

Բայց ոչ ամէն ինչ... Անոնք իրենց հետ Ալմելո բերած են իրենց սէրը եւ նուիրուածութիւնը, նաեւ համոզումն ու պատրաստակամութիւնը՝ կերտելու «փոքրիկ Հայաստան»: Փոքր թիւով, բայց՝ մեծ սրտով եւ հոգեբանութեամբ: Ալմելոյի հայերը կը փաստեն, որ հայն ու հայութիւնը մեր կեանքերուն համար անհրաժեշտ իրականութիւններ են, զորս պէտք է պահել ի վերջին ամէն գոհողութեան:

Անոնց գոհողութեան հիմնական նպատակն է կերտել «փոքր Հայաստան»:

Մեծ իրաքէն՝ փոքր Հայաստան: Մեծ ու փոքր այս խաչմերուկներուն վկայ կայ մէկ առաքելութիւն՝ հայասպահայանում:

Եւ հայասպահայանութեան մեծ աշխատանքով է, որ կը պահենք հայը... Եւ Հայաստանը...

Հայաստան Առաջին Պարտութիւնը Կրեց Ֆուտպոլի Աշխարհի Բաժակի Ընտրական Մրցաշարքէն Ներս



Հայաստանի ազգային հաւաքականը առաջին պարտութիւնը կրեց ֆուտպոլի Աշխարհի Բաժակի 2022 թուականի ընտրական մրցաշարքէն ներս՝ կիրակի Սեպտեմբեր 5-ի երեկոյեան Շվեյցարիայի մէջ Գերմանիոյ հաւաքականէն 6 անպատասխան գնդակ ընդունելով սեփական դարպասը:

Հանդիպումը անցաւ աշխարհի քառակի ախոյեանի բացայայտ առաւելութեամբ, որ արդէն առաջին խաղակէսին առաջ էր 4:0 արդիւնքով:

Այս պարտութենէն ետք Հայաստանի հաւաքականը յիշումբին մէջ զիջեցաւ առաջատարի դիրքերը՝ աղիւսակը 12 միաւորով գլխաւորեց Գերմանիոյ խումբը, իսկ Հայաստան հինգ հանդիպումէ յետոյ երկրորդ երկրորդ դիրքի վրայ է: Երրորդ տեղը կը գրաւէ Ռուսիոյ հաւաքականը, որ հինգերորդ հանգրուանին սեփական յարկին տակ 2:0 արդիւնքով առաւելութեան հասաւ Լիտւենիոյ խումբի նկատմամբ, չորրորդը՝ Հիւսիսային Մակեդոնիոյ հաւաքականն է, որ Ռէքսիալի մէջ ոչ-ոքի՝ 2:2 խաղցաւ Իսլանտայի հաւաքականին հետ:

Վեցերորդ շրջանին Սեպտեմբեր 8-ին Հայաստանի հաւաքականը Երեւանի մէջ պիտի ընդունի խումբի յետնապահին՝ Լիտւենիոյ հաւաքականը, իսկ յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ մէկ ամիս ետք՝ Հոկտեմբեր 8-ին, երբ կը հիւրընկալէ Իսլանտայի հաւաքականը:

Եւրոպական Խմբակներու Արդիւնքները

Շաբաթավերջին տեղի ունեցան Աշխարհի բաժակի Եւրոպայի գոտիի գտումի 5-րդ հանգրուանի մրցումներուն, որոնց ընթացքին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

Բ. խմբակ.

Քոսովօ - Յունաստան 1-1

Սլովենիա - Վրաստան 4-0

Գ. խմբակ.

Զուիցերիա - Իտալիա 0-0

Պուլկարիա - Լիթուանիա 1-0

Թ. խմբակ.

Ալբանիա - Հունգարիա 1-0

Անգլիա - Անտորրա 4-0

Սան Մարինօ - Լեհաստան 1-7

Ժ. խմբակ.

- Իսլանտա - Հիւս.Մակեդոնիա 2-2

- Գերմանիա - Հայաստան 6-0

- Ռուսիան - Լիխթենշթայն 2-0

Դասաւորում.

1) Գերմանիա 12 կէտ

2) Հայաստան 10 կէտ

3) Ռուսիան 9 կէտ

4) Հիւս. Մակեդոնիա 8 կէտ

5) Իսլանտա 4 կէտ 5-9

6) Լիխթենշթայն 0 կէտ

ՈւեՖԱ Նախագահը Դէմ Է Աշխարհի Բաժակի 2 Տարին Մէկ Կայացմանը

ՈւեՖԱ նախագահ Ալեքսանդր Չեֆերինը մեկնաբանած է ֆուտպոլի Աշխարհի Բաժակը երկու տարին մէկ կայացնելու գաղափարը, որ այժմ կը շրջանառէ ՖիՖԱ-ն:

Աւելի մեծ քանակը չի նշանակեր աւելի լաւ: Աշխարհի Բաժակի ամբողջ արժէքը հազուադէպ ըլլալու մէջ է: Ամէն երկու տարին մէկ անցկացնելը կը թուլացնէ մրցաշարը եւ կ'արժեզրկի անոր հեղինակութիւնը,- Չեֆերինի խօսքը կը մէջբերէ Goal.com-ը:

ՖիՖԱ-ի այս գաղափարի մասին քանի մը անգամ արտայայտուած է միջազգային ֆեդերացիայի Ֆուտպոլի գլոբալ զարգացման բաժնի ղեկավար, Լոնտոնի Արսենալի նախկին գլխաւոր մարզիչ, ֆրանսացի Արսէն Վենգերը, որ նշած էր, թէ հանդիպումներու քանակը մէկ

Ուրուկուայը Յաղթեց, Չիլի Ու Քոլումպիան Միաւորներ Կորսնցուցին

Քաթարի մէջ կայանալիք 2022թ. ֆուտպոլի Աշխարհի Բաժակի ընտրական փուլի հարաւ-ամերիկեան գոտիի մրցաշարքի գծով տեղի ունեցան 6-րդ հանգրուանէն յետոյ արձանագրուած հանդիպումները:

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts
1 Brazil	7	7	0	0	17	2	15	21
2 Argentina	7	4	3	0	12	6	6	15
3 Ecuador	8	4	1	3	16	10	6	13
4 Uruguay	8	3	3	2	12	10	2	12
5 Colombia	8	2	4	2	13	15	-2	10
6 Paraguay	8	1	5	2	7	10	-3	8
7 Peru	8	2	2	4	8	15	-7	8
8 Chile	8	1	4	3	8	9	-1	7
9 Bolivia	8	1	3	4	12	19	-7	6
10 Venezuela	8	1	1	6	4	13	-9	4

Հանգրուանի կեդրոնական խաղը Պրագիլի եւ Արժենթինի հաւաքա-

կաններու միջեւ դադարեցուած էր 0:0 հաշուի ժամանակ եւ մնացել անաւարտ: Արժենթինի հաւաքականը մեկնարկային մի քանի վայրկեաններէն յետոյ լքած էր խաղադաշտը, քանի որ Պրագիլի ներգաղթային ծառայութեան եւ ոստիկանութեան աշխատակիցները փորձած էին դաշտէն դուրս բերել անգլիական ակումբներուն մէջ հանդէս եկող էմիլիանո Մարտինեսին, էմիլիանօ Բուենօրիային, Լօ Չելսոյին ու Կրիստիան Ռոմերոյին եւ անոնց արտաքսած են երկրէն կորոնաժահրի կանոնները խախտելու համար:

6-րդ շրջանը յաղթական արձանագրեցին է Ուրուկուայի եւ Փերուի: Ընդհանուր առմամբ արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները

Ուրուկուայ - Պոլիւիա՝ 4:2

էկուատոր - Չիլի՝ 0:0

Փարակուայ - Քոլումբիա՝ 1:1

Փերու - Վենեսուելա՝ 1:0

Պրագիլիի հաւաքականը 7 խաղէն յետոյ 21 միաւորով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղին կը գտնուող Արժենթին, որ ունի 15 միաւոր: 13 միաւորով երրորդ տեղը կը գրաւեն էկուատորցիները, որոնք ունեցած են 8 հանդիպում:

Միացեալ Նահանգները Առաջին Երկու Մրցումները Աւարտեց Յաւասարութեամբ

Ֆուտպոլի Աշխարհի Բաժակի ՔՈՆՔԱՔԱՅԻ երկիրներու գտումներու մրցումներուն գծով Միացեալ Նահանգներու հաւաքականը իր առաջին երկու խաղերը աւարտեց հաւասարութեամբ:

Մրցակիցի դաշտին վրայ՝ ԱՄՆ 0-0 արդիւնքով հաւասարեցաւ Սալվատորի հետ: Երկրորդ մրցումին՝ սեփական հարկի տակ ընդունելով Գանատայի ազգային խումբը Ամերիկա դարձեալ բաւարարուեցաւ հաւասար՝ 1-1 արդիւնքով:

Միւս կողմէ, Մեքսիքայի հաւաքականը իր առաջին երկու մրցումներուն հասաւ յաղթանակի՝ պարտութեան մատնելով Ճամայքային 2-1 արդիւնքով, իսկ Քոսթա Ռիքային 0-1 արդիւնքով:

Այս արդիւնքներէն ետք իմբակի դասաւորումը ստացաւ հետեւեալ պատկերը.

1) Մեքսիքա 6 կէտ, 2) Փանամա 4 կէտ, 3) Գանատա 2 կէտ, 4) Հոնտուրաս 2 կէտ, 5) ԱՄՆ 2 կէտ, 6) Սալվատոր 2 կէտ, 7) Քոսթա Ռիքա 1 կէտ, 8) Ճամայքա 0 կէտ:

Յայտնենք որ, առաջին երեք տեղերը գրաւող երկիրները կը հասնին 2022-ին Քաթարի մէջ տեղի ունենալիք աւարտական մրցաշարքին, իսկ չորրորդ երկիրը աւարտականներուն հասնելու տոմս ձեռք ձգելու համար կը մասնակիցի միջցամաքային փլէյօֆ-ի:

Լեւոն Արոնեան Կը Տեղափոխուի Միացեալ Նահանգներ

«Երբեք չեմ ցանկացած հանդէս գալ այլ երկրի դրօշի ներքեւ, բայց, ցաւոք, այդ ըլլալու է: Վաղը կը մեկնիմ եւ տխուր եմ այդ փաստով»: Այս մասին շախմատիստներու եւ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսաւ Համաշխարհային Ողիմպիադայի եռակի ախոյեան, կրկնակի աշխարհի գաւաթակիր, գրոսմայստեր Լեւոն Արոնեանը, որ Սեպտեմբերի 6-ին կը մեկնի ԱՄՆ: Հայաստանի առաջատար շախմատիստը կը տեղափոխի ԱՄՆ եւ կը ներկայացնէ այդ երկիրը:



Մեկնումէն առաջ գրոսմայստերը հանդիպեցաւ իր եւ Գաբրիէլ Սարգսեանի անուան ճատրակի դպրոցի սաներուն: Հանդիպման ընթացքին դպրոցի սաներէն մէկը հարց ուղղեց Արոնեանին, թէ ցանկացե՞լ է երբեք հանդէս գալ այլ երկրի դրօշի ներքեւ:

«Երբեք չեմ ցանկացած այլ դրօշի ներքեւ հանդէս գալ: Մեր դրօշէն աւելի քաղցր դրօշ ինձ համար գոյութիւն չունի: Յաւօք, այդ պիտի ըլլայ, բայց չեմ կրնար ըսել, որ այդ պիտի ըլլայ իմ ցանկութեամբ», - պատասխանեց Լեւոն Արոնեանը:

մրցաշրջանին չաւելնար, իսկ եզրափակիչ մրցաշարէն յետոյ կ'ըլլայ 25 օրուայ պարտադիր հանգիստ մասնակիցներու համար:

4 ՍԵՊՏԵՄԲԵՐԷՆ ՍԿՍԵԱԿ ԿԱՆՈՒԽ ՔՈՒԷՄԱՐԿՈՂ ԳԱԻԱՌՆԵՐ

Կրնան Քուէարկել Քալիֆորնիոյ
Նահանգապետի Պաշտօնանկութեան
Ընտրութեան

LOS ANGELES | ORANGE

ՁԵՐ ՔՈՒԷՆ ՁԵՐ ՁԱ՛ՅՆՆ Է



VOTE SAFE

CALIFORNIA

A CALIFORNIA SECRETARY OF STATE CAMPAIGN

Աւելին իմանալու համար այցելեցէ՛ք

MyVCA.sos.ca.gov կայքը